ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

20 մայիսի 2025 թվական

4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 14.00

Տիգրան Ավինյան

-Ավագանու հարգելի՝ անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 22 անդամ՝

Վահան Ավագյան՝ «Հանրային ձայն» խմբակցություն,

Պեդրո Զարոկյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,

Գևորգ Ստեփանյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Գրիգոր Իսկանդարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Արշակ Սարգսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Միքայել Խաչատրյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

Տիգրան Պետրոսյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,

Մեսրոպ Մանուկյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Ռոբերտ Ծովյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,

Լուսինե Բուղայան՝ «Հանրային ձայն» խմբակցություն,

Մանուկ Սուքիասյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Արմենակ Դանիելյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Աշոտ Սարգսյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

Սուսաննա Մելիքյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Արամ Թորոսյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,

Արմեն Գալջյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

Արմեն Քոչարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Սամվել Հակոբյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Աննա Ավետիսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Արաքսի Դիլանյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Սեդա Տեր-Մինասյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Հայկ Միրզոյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցը՝ «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյան, խնդրեմ:

Վահան Ավագյան

-Պարոն Ավինյան, ցանկանում եմ հիշեցնել Վարդաշեն թաղամասի շենքի վերաբերյալ, քանի որ այս հարցով ինձ դիմում են և ես ուզում եմ հիշեցնել, որ այս մասով խոստում եք տվել Վարդաշենի բնակիչներին:

Մյուս հարցը վերաբերում է Ծիծեռնակաբերդի խճուղու փլուզված ճանապարհահատվածին, որի մասին անդրադարձել եմ դեռևս նոր ավագանի ընտրված ժամանակահատվածից: Անդրադարձել էի նաև Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի հարակից ստորգետնյա անցման խնդրին, որի հարցը կարծես թե լուծվեց:

Տիգրան Ավինյան

-Անդրադառնալով Ծիծեռնակաբերդի խճուղու փլուզված ճանապարհահատվածի վերաբերյալ հարցին, ցանկանում եմ նշել, որ վերջին տվյալներով այդ հատվածում, որտեղ տեղի էր ունեցել փլուզումը, շուտով ավարտվելու են հիմնական աշխատանքերը: Այնուամենայնիվ, մեր փորձագետներն այդ ճանապարհի հարակից հատվածում դեռևս փլուզման ռիսկեր տեսնում են, այսինքն՝ աշխատանքներն այդտեղ ավարտելուց հետո, մյուս հատվածում նույնպես որոշակի ծավալների աշխատանքներ պետք է իրականացվի:

Վարդաշենի թաղամասի վերաբերյալ հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը:

Արմեն Փամբուխչյան

-Վարդաշենի թաղամասի հարցի վերաբերյալ ցանկանում եմ նշել, որ նախորդ շաբաթ ՀՀ կառավարությունում՝ փոխվարչապետի գլխավորությամբ, քննարկում է տեղի ունեցել: Զմանրամասնելով փակ քննարկման բովանդակությունը՝ նշեմ, որ մեծ հույսեր կան, որ առաջիկայում այս հարցի վերաբերյալ կունենանք դրական լուծումներ:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Պեդրո Զարոկյան, խնդրեմ:

Պեդրո Զարոկյան

-Պարոն Ավինյան, վերջերս մի լրագրող Ձեզ հարց ուղղեց քրեական գործերի վերաբերյալ և Դուք պատասխանեցիք, որ Ձեր հետ կապված իրավական գործընթաց չկա և չի կարող լինել: Ես ուզում եմ հասկանալ՝ որտեղի՞ց է գալիս Ձեր այս ինքնավստահությունը:

Հնարավո՞ր է, որ այն կապված է այն փաստի հետ, որ իրավապահ համակարգի աշխատակիցների հարազատներին աշխատանքի եք ընդունել «ԱՆԻՖ» ընկերությունում և լուրեր կան նաև, որ Երևանի քաղաքապետարանում գլխավոր դատախազի ընտանիքի անդամներից է աշխատանքի ընդունվել: Կարող եք հերքել, եթե սխալվում եմ: Արդյոք այդ հանգամանքն է ազդում, որ Դուք այդքան ինքնավստահ լինեք, որ որպես բարձր պաշտոնյա չի կարող Ձեր դեմ քրեական գործ հարուցվի:

Տիգրան Ավինյան

-Իմ վստահությունը գալիս է միայն մեկ հանգամանքից և դա այն է, որ իմ որևէ գործողություն, վերջին 7 տարվա ընթացքում, չէր կարող հանգեցնել քրեական գործ հարուցելու:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գևորգ Ստեփանյան, խնդրեմ:

Գևորգ Ստեփանյան

-Մի քանի օր առաջ, Հակակոռուպցիոն կոմիտեի տարածած հայտարարությունից հետո Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի բաժնի աշխատակիցները մասսայաբար ազատվել են աշխատանքից՝ ստիպողաբար:

Ինձ են դիմել այդ աշխատակիցները, տեղեկացրել նաև, որ մի քանիսը հրաժարվել են, իսկ մի քանիսը դատական հայցեր են ներկայացնելու: Նրանց մեջ կային երիտասարդ, շատ բարեխիղճ աշխատակիցներ և նաև 32 տարվա աշխատանքային փորձ ունեցող աշխատակիցներ: Խնդրում եմ պարզաբանեք, Ձեր հովանու տակ, Ձեր ենթակայությամբ գործող աշխատավայրում ի՞նչ է կատարվում:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար Ռազմիկ Մկրտչյանը:

Ռազմիկ Մկրտչյան

-Չեմ պատկերացնում, թե վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցներից ով կարող էր դիմել պարոն Ստեփանյանին: Ես չեմ կարծում, որ նման աշխատակից եղել է: Մենք պարոն Ստեփանյանի հետ կքննարկենք ու նաև ես կներկայացնեմ խնդիրը:

Այն գործերով, որ անցնում են մեր նախկին աշխատակիցները շատ հրապարակվեց և լրատվամիջոցները նրանց ներկայացրեցին իբրև ներկայիս աշխատակիցներ, բայց դա

իրականությանը չէր համապատասխանում: Նրանք նախկին աշխատակիցներ են, ովքեր տարբեր պատճառներով, մասնավորապես՝ վատ աշխատելու պատճառով, աշխատանքից ազատվել էին: Ազատված աշխատակիցների հետ կապված խնդիրը եղել է վատ վերահսկողությունը: Նրանք տարածքները վատ են վերահսկել և ունեցանք այն դեպքը, որ մեկ աշխատակից ձերբակալվեց: Դա վատ վերահսկողության արդյունք էր: Ցավով եմ նշում՝ այն աշխատակիցները, ովքեր պետք է պատշաճ կերպով աշխատեին իրենց տարածքներում և ճիշտ վերահսկողություն իրականացնեին, ենթադրում եմ՝ թերացել են: Դա է եղել պատճառը, որ աշխատակիցներն աշխատանքից ազատման դիմում են գրել: Իսկ այն, որ աշխատանքից ազատված բազմաթիվ աշխատակիցներ կան, կխնդրեմ պարոն Ստեփանյանը հրապարակի անունները: Չեմ տեսել որևէ աշխատակցի, ով դժգոհություն հայտնի:

Գևորգ Ստեփանյան

-Այդ աշխատակիցը, ով 32 տարվա աշխատանքային փորձ ուներ, ասաց, որ դիմումում քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Շավարշ Գրիգորյանին ներկայացրել է մանրամասները, ես պարոն Գրիգորյանին կասեմ այդ աշխատակցի անունը:

Հաջորդ հարցը հնչեցնեմ. պարոն Ավինյան, մեկ տարի առաջ ես հարց բարձրացրեցի, որ Ներքին Շենգավիթի փողոցներում «խրամատներ» են առաջացել, Դուք հանձնարարեցիք, որ 10-օրյա ժամկետում, անկանխատեսելի անձրևների վերջանալուն պես, վերանորոգվեն այդ փոսերը: Պարոն Ավինյան, խայտառակ վիճակ է այդտեղ, մեծացել են «խրամատները»:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար Ռազմիկ Մկրտչյանը:

Ռազմիկ Մկրտչյան

-Պարոն քաղաքապետ, կուսումնասիրվի հարցը և կներկայացվի տեղեկատվություն:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյան, խնդրեմ:

Գրիգոր Իսկանդարյան

-Պարոն Ավինյան, Դուք հարցազրույցի ընթացքում նշել եք, որ 2024 թվականին կատարված փոսանորոգման աշխատանքներից հետո փոսեր չեն մնացել:

Ես նկարել եմ տարածք, որտեղ առկա է փոս և այժմ այնտեղ կատարվում են ասֆալտապատման աշխատանքներ: Այդ նույն հատվածում 2024 թվականին երեք անգամ կատարվել էր ասֆալտապատման աշխատանքներ և այժմ նորից նույն հատվածում կատարվում է ասֆալտապատման աշխատանքներ: Այս ամենը ռեսուրսի անիմաստ վատնում է, վատ աշխատանքի և վատ տեխհսկողության արդյունք է: Տեխհսկողության հարցն անհրաժեշտ է պարզաբանել և կարելի է այդ հարցը լուծել չափորոշիչներ փոխելով:

Պարոն Ավինյան, ինչպե՞ս եք որակավորում, որ 2024 թվականին կատարված ասֆալտապատման աշխատանքներից հետո, 2025 թվականին կրկին կատարվում են նույն աշխատանքները:

Երկրորդ հարցը վերաբերում է նախնական համաձայնություն տալու վերաբերյալ ավագանու որոշումների նախագծերին:

Երևանի ավագանու գլխադասային հանձնաժողովում բացասական եզրակացություն ստացած ավագանու որոշման նախագծերը Դուք ավագանու նիստերի օրակարգից հանում եք:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համապատասխան հոդվածով համարվում է դրական, ստացվում է, որ երաշխիքով նախնական թույլտվություն է տրվում:

Տիգրան Ավինյան

- Առաջին հարցում Ձեր կողմից մեջբերած իմ խոսքն արդեն իսկ իրականությանը չի համապատասխանում:

Ես ասել եմ, որ նախորդ տարի Երևան քաղաքում իրականացվել է 50 կմ-ից ավելի միջին նորոգման աշխատանքներ:

Ասֆալտապատման աշխատանքները բաժանվում են մի քանի տեսակի՝ փոսալցման, միջին նորոգման և հիմնանորոգման աշխատանքներ: Հիմնանորոգման աշխատանքները պահանջում են նախագիծ, որոշ դեպքերում նախագծային փաստաթղթավորում է անհրաժեշտ նաև միջին նորոգման աշխատանքների համար: Ես խոսել եմ միջին նորոգման աշխատանքների մասին:

Պարոն Իսկանդարյան, հնարավոր է մի հատվածում իրականացվի փոսալցման աշխատանքներ և դրա հարակից տարածում կամ նույն վայրում կրկին փոս առաջանա:

Ես ասել եմ, որ նախորդ տարի Երևան քաղաքում իրականացվել է 50 կմ-ից ավելի միջին նորոգման աշխատանքներ, այդ հատվածում որտե՞ղ է խնդիր արձանագրվել:

Իմ խոսքի էությունը կայանում է նրանում, որ պետք է աշխատանքները բարձրացնել նոր որակական մակարդակի և այժմ դա ենք անում:

Այժմ անդրադառնամ Ձեր կողմից հնչեցված երկրորդ հարցին:

Պարոն Իսկանդարյան, նախկինում ՇՄԱԳ փորձաքննության նախագիծը նիստի օրակարգից հանվում էր և որևէ կերպ չէր ազդում ՇՄԱԳ լսումների արդյունքի վրա: Այսինքն, եթե ՇՄԱԳ լսումների արդյունքում տրվել էր դրական եզրակացություն, իսկ նիստում նախագիծն ընդունվեր բացասական եզրակացությամբ կամ նախագիծը հանվեր օրակարգի նախագծից, ապա ՇՄԱԳ փորձաքննության դրական լսումների արդյունքի հիման վրա նախագիծը բոլոր համապատասխան ընթացակարգերը կանցներ:

Այժմ նախագիծը չի հանվում օրակարգի նախագծից, քանի որ իրականում որևէ փոփոխություն չի լինում:

Հարգելի՛ գործընկերներ, մեկ անգամ ևս հիշեցնեմ, որ ՇՄԱԳ փորձաքննությունների լսումների այս գործընթացը միշտ չէ, որ ուղիղ փոխկապակցված է վերջնական նախագծերի հետ և կարող է հաստատվել Երևանի քաղաքապետարանի կողմից:

Հաջորդ հարցը «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արշակ Սարգսյան, խնդրեմ:

Արշակ Սարգսյան

- Հարցս վերաբերում է Մանկական երկաթուղուն: Ապրիլ ամսին վարձակալությամբ տրված պայմանագրի ժամկետը վերջացել է: Ասել եք, որ հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ պետք է տալ:

Ուզում եմ իմանալ ի՞նչ է արվելու երկաթուղին վերականգնելու ուղղությամբ: Արձանագրել ենք, որ ՀՀ կառավարության հետ որոշել եք այդ տարածքում ռեստորաններ և բնակելի էլիտար շենքեր չկառուցել:

Կարևոր է, որ քաղաքացիներն իմանան ե՞րբ և ի՞նչ է արվելու Մանկական երկաթուղին վերականգնելու ուղղությամբ:

Երկրորդ հարցը վերաբերում է Թումոյի այգուն: Այգին պայմանագրով, 99 տարի ժամկետով, անհատույց տրվել է «Սիմոնյան» բարեգործական ընկերությանը:

Պարոն Ավինյան, նորմալ ե՞ք համարում այգում սեփականաշնորհված տարածքների առկայությունը, թե ոչ: Արդյոք իրավապահ մարմինները ստուգել և ուսումնասիրել են այդ գործերը:

Նազարբեկյան թաղամասում կա ծառուղի և Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեով նախատեսված էր, որ ծառուղու վերջնամասում այգու հիմնման աշխատանքները պետք է ավարտվեր: Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի հաշվետվության մեջ այդ մասին տեղեկատվություն առկա չէր:

Խնդրում եմ պատասխանել աշխատանքներն ինչու՞ չեն ավարտվել:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալ եմ, որ բարձրաձայնում եք այգիներում սեփականաշնորհված տարբեր կառույցների մասին: Երևանի քաղաքապետարանը վերջին 3 տարվա ընթացքում բազմաթիվ այգիներում (Օղակաձև զբոսայգի, Մերգելյանի այգի և այլ այգիներ) այդ կառույցներն ապամոնտաժել է: Ապամոնտաժման աշխատանքներ իրականացվել են նաև մայթերում: Հիմնականում այդ կառույցները պատկանում են նախկին իշխանության հետ փոխկապակցված անձանց:

Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ Թումոյի այգում որևէ մասնավորեցում և սեփականաշնորհում համարվում է անօրինականություն և հանցագործություն:

Երևանի քաղաքապետարանն իր լիազորությունների շրջանակում պայքարում է այդ անօրինականության դեմ, ինչպես նաև քաղաքապետի պաշտոնը ստանձնելուց ի վեր և այդ ժամանակաշրջանից մի փոքր առաջ, քաղաքապետարանը Հողային օրենսգրքի

60-րդ հոդվածի համաձայն՝ սեփականության իրավունքի հնարավորությամբ որևէ մեկին տարածք չի տրամադրել: Հնարավոր է տրամադրվել է կառուցապատման իրավունք, որը ժամանակավոր է և ենթադրվում է, որ այդ անշարժ գույքը հետագայում վերադարձվելու է քաղաքին:

Ինչ վերաբերում է Մանկական երկաթուղուն, պետք է նշեմ, որ Մանկական երկաթուղու տարածքում առաջարկվում էր կառուցել հյուրանոց: Երևանի քաղաքապետարանը չի ընդունել այդ առաջարկը և չի ընդունելու նմանատիպ առաջարկներ: Այգիների փոխարեն հյուրանոցի, Հրազդանի կիրճում բազմաֆունկցիոնալ բիզնես կենտրոնի կառուցման և նմանատիպ այլ առաջարկները Երևանի քաղաքապետարանի համար ընդունելի չեն: Այս մասով Երևանի քաղաքապետարանը վարում է շատ «կոշտ» քաղաքականություն: Երևանի քաղաքապետարանը Մանկական երկաթուղու վերակառուցման ծրագրի համար կդնի երկփուլ մրցույթ և լավ նախագիծ ստանալու դեպքում Ձեզ ևս կտեղեկացնենք:

Հարգելի՛ գործընկերներ, մնացյալ այգիների հետ կապված պետք է նշեմ, որ վերջին երեք տարվա ընթացքում այգիներում էական աշխատանքներ են տարվել:

Շնորհակալ եմ, որ Դուք ևս բարձրաձայնում եք այդ հարցերը:

Պարզաբանումներ կներկայացնի նաև Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար Սերոբ Սարգսյանը:

Սերոբ Սարգսյան

-Երևան քաղաքի 2024 թվականի հաստատված բյուջեով ծառուղու հետ կապված որևէ ծրագիր չի եղել, որը չի իրականացվել: Այս պահի դրությամբ առկա է շների զբոսավայր կառուցելու վերաբերյալ պատվիրված նախագիծ: Այդ նախագիծը գտնվում է փորձաքննության փուլում, ծրագիրն իր մեջ ներառում է շրջակա միջավայրի արտաքին լուսավորության, նստարանների տեղադրման աշխատանքներ: Նախագիծը պատրաստ լինելուց հետո, ֆինանսական միջոցների առկայության պարագայում, աշխատանքների իրականացման համար կհայտարարվի մրցույթ:

Տիգրան Ավինյան

-Հարգելի՛ գործընկերներ, Հրազդանի կիրճում իրականացվել են համապարփակ հետազոտություններ՝ ֆլորայի, ֆաունայի, մշակութային հուշարձանների և տարածքում գործող բոլոր օբյեկտների խնդիրների վերաբերյալ: Իրականացվել է նաև համապատասխան քարտեզավորում, որի հիման վրա սպասում ենք ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակված «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի ընդունմանը: Այնուհետև, Երևան քաղաքի ավագանին կքննարկի Հրազդանի կիրճին հատուկ կարգավիճակ տալու հարցը, որը լինելու է նշված հետազոտության հիման վրա:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Միքայել Խաչատրյան, խնդրեմ:

Միքայել Խաչատրյան

-Հարցս Էրեբունի վարչական շրջանի Խաղաղ Դոնի փողոցի անբարեկարգ վիճակի վերաբերյալ է: Ցանկանում եմ իմանալ այս մասով ի՞նչ լուծումներ եք առաջարկում:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-Պարոն Խաչատրյան, այո, Էրեբունի վարչական շրջանի Խաղաղ Դոնի փողոցը գտնվում է ոչ բարվոք վիճակում: Հողային պաստառն ամբողջությամբ խախտված է, որի հետևանքով խախտվել են նաև ասֆալտբետոնյա պաստառի ծածկույթի թեքությունները, քայքայված են և՛ եզրաքարերը, և՛ մայթերը, փողոցը գտնվում է շատ վատ վիճակում: Այդ պատճառով էլ քաղաքապետի հանձնարարությամբ պատվիրվել է Խաղաղ Դոնի փողոցի ոչ թե միջին և ընթացիկ նորոգման, այլ հիմնանորգման նախագիծ, այսինքն՝ փողոցն ամբողջովին պետք է ենթարկվի հիմնանորոգման:

Այդ նախագծի պատվերի համար արդեն հայտարարված է մրցույթ և նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստ լինելուց հետո կկայանա շինարարական աշխատանքների մրցույթ:

Պետք է նշել, որ այստեղ կա նաև մի կարևորագույն հանգամանք: Այս փողոցը զուրկ է մակերևութային ջրերի հեռացման հեղեղատար համակարգից, ինչը դժվար անցանելի է դարձնում փողոցը և ջրի կուտակումները հաճախակի պատճառ են դառնում ճանապարհի քայքայման: Արդեն իսկ պատվիրված է փողոցի հեղեղատար համակարգի նախագծանախահաշվային փաստաթղթերը, որոնք այս պահին գտնվում են փորձաքննության փուլում և զուգահեռ պատվիրված է փողոցի նորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը: Մեկ փաթեթով կներկայացվի կապալի աշխատանքների մրցույթի: Հուսով եմ, որ այս տարի մենք կունենանք նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը, որից հետո արդեն միայն բյուջետային հատկացումների շրջանակներում կիրականացվի փողոցի հիմնանորոգման աշխատանքներ:

Ի դեպ պարոն քաղաքապետ պետք է ավելացնեմ. այն հանձնարարականը, որը վերաբերում էր մակերևութային ջրերի հեղեղատար համակարգի կառուցանը, մենք մինչև ֆինանսական միջոցների ի հայտ գալը, արդեն մայրաքաղաքի 51 հասցեում իրականացրել ենք գուքագրում: Նշեմ, որ արձանագրել և պատվիրել ենք հեղեղատար համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը, որոնց փորձաքննության փուլի ավարտից հետո պարզ կդառնա նաև ֆինանսական գնահատականը:

Այնպես որ, պարոն Խաչատրյան, ես Ձեզ վստահեցնում եմ, որ այդ փողոցը՝ հիմնանորգված վիճակում կլինի 2026 թվականին:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Տիգրան Պետրոսյան, խնդրեմ:

Տիգրան Պետրոսյան

-Առաջին հարցը վերաբերում է Վերածնունդ թաղամասի բնակիչների խնդրանքին: Թաղամասում բնակիչների քանակը բավականին ավելացել է և հարակից՝ արագ երթևեկություն ունեցող փողոցներում վտանգավոր իրավիճակ է ստեղծվում:

Առաջարկում եմ, մինչ այդ հատվածում վերգետնյա անցումներ կառուցելը, դիտարկել կանչովի լուսացույց տեղադրելու հարցը, որպեսզի քաղաքացիները չբախվեն վտանգների այդ փողոցներն անցնելու ժամանակ:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը:

Վազգեն Հարությունյան

-Նշված թաղամասի վերաբերյալ հայտնեմ, որ անցյալ տարի մեկ հետիոտնային անցում՝ արհեստական անհարթությամբ, կառուցվել է Մոնթե Մելքոնյան փողոցում: Ձեր կողմից նշված՝ Ծիծեռնակաբերդի խճուղու հատվածում երթևեկության մասով խնդիր է առաջանում, որովհետև տեսանելիության խնդիր կա: Լուսացույցով հետիոտնային անցման կազմակերպումը, տեսանելիությամբ պայմանավորված, կարող է առաջացնել վթարներ և դրանով պայմանավորված աշխատանքներ չեն կատարվել: Պետք է նշեմ, որ տվյալ հատվածում ներկայումս այլ աշխատանքներ են կատարվում՝ կանգառակետերի սահմանման ուղղությամբ, ուսումնասիրություն է իրականացվում և առաջիկա ամիսների ընթացքում այդ հատվածում կսահմանվեն կանգառի տեղեր:

Տիգրան Ավինյան

-Ես ևս պարզաբանեմ պարոն Պետրոսյան. Մոնթե Մելքոնյան փողոցում որոշակի լուծում տրվել է: Ծիծեռնակաբերդի խճուղու այն հատվածում, որտեղ բնակիչները ցանկանում են անցում լինի՝ վտանգավոր է, որովհետև ավտոմեքենաների թեքվելու հատվածում է գտնվում և կանչովի լուսացույց այդ վայրում դնելու դեպքում՝ վրաերթի պոտենցիալ դեպքեր կլինեն: Այս հարցը քննարկվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ոստիկանության և ճանապարհային ոստիկանության հետ, հետևապես փորձում ենք լուծումներն այլ ձևերով գտնել: Մասնավորապես՝ այդ հատվածներում համապատասխան կանգառներ սահմանել և հիմնական հոսքն այնպես կազմակերպել, որ կանգառները մոտակայքում լինեն և մարդիկ ստիպված չլինեն փողոց անցնել: Այն հատվածը, որտեղ բնակիչները ցանկանում են անցում լինի՝ վտանգավոր է:

Տիգրան Պետրոսյան

- Երկրորդ հարցը հնչեցնեմ. հարցերիս մեծ մասը կապված է չարահաշահումների, ռիսկերի, ոչ արդյունավետ ծախսերի հետ, իսկ դա կանխարգելելու, վերահսկելու

գործառույթը պետք է իրականացվի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության կողմից:

Ես՝ որպես ավագանու անդամ, ուղարկել եմ պաշտոնական գրություններ վարչության հիմնական գործառույթների վերաբերյալ: Օրինակ՝ փետրվար ամսում քանի՞ ստուգում են իրականացրել, քանի՞ խախտում են հայտնաբերել, քանի՞ հանձնարարական են տվել և տրված հանձնարարականների քանի՞ տոկոսն է կատարվել: Ընդհանուր չորս թիվ եմ խնդրել, որ ինձ տրամադրեն: Տրվել է պատասխան, որ տարբեր հարթակներով ստացել են մոտ 10.000 նամակ ու այդ պատասխանից տպավորություն է ստեղծվում, որ քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության հիմնական գործառույթը նամակ հաշվելն է, ոչ թե վերահսկողություն իրականացնելը:

Պարոն Ավինյան, Դուք՝ որպես Երևանի քաղաքապետ, ինչպե՞ս եք գնահատում վերահսկողության վարչության գործառույթները, ո՞ր ցուցանիշներով և ինչպե՞ս եք վերաբերվում, որ Երևանի ավագանու անդամի հարցումներին այսպիսի պատասխան տալուն:

Տիգրան Ավինյան

-Պարոն Պետրոսյան, վերահսկողության վարչության բուն գործառութային աշխատանքներից ներկայացնեմ, մասնավորապես՝ մեր գործընկերները բարձրաձայնել էին մանկապարտեզներում խնդիրների մասին և վերահսկողության վարչությունը մանկապարտեզների խնդրով մի քանի ամիս է զբաղվում է: Շինարարի հետ բանակցություններ են տարվում լուծումներ գտնելու համար և եթե գտնենք լուծումներ՝ շատ լավ կլինի, եթե չգտնենք լուծումներ՝ այլ ընթացակարգով առաջ կընթանանք:

Վերահսկողության վարչության պատասխանի մասին տեղյակ չեմ, կծանոթանամ պատասխանին և իմ հանձնարարականով կտրվի ընթացք:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Մեսրոպ Մանուկյան, խնդրեմ:

Մեսրոպ Մանուկյան

-Առաջին հարցս հետևյալն է. «Լիլիան Արմ» ընկերությունը, ինձ մեղադրում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից պահանջ չի եղել ասֆալտապատումն իրականացնել բիտումով և ես այդ ընկերությանը զրպարտել եմ: Այսինքն՝ ասֆալտապատման իրականացման պահանջը, որը քաղաքապետարանի կողմից նախագծով սահմանվել է, դա լուրջ խնդիր է և բիտում չի եղել: Այս մասով առաջարկություն ունեմ. ուզում եմ նշել, որ նախագծերի մեջ մասսայական ես նկատում եմ թերություններ, այսինքն, երբ որ մրցույթը հայտարարվում է, նախագծային փուլում լուրջ խնդիրներ են լինում և հետագայում արդեն շինարարը, իսկ վերջնական փուլում արդեն քաղաքացին՝ լուրջ խնդիրներ են ունենում:

Տիգրան Ավինյան

-Պարոն Մանուկյան, ցանկանում եմ այս մասով առավել ընդհանուր տեղեկատվություն տալ. 2018 թվականին, երբ ես փոխվարչապետ էի և սկսել էինք մեծ

ծավալով շինարարական աշխատանքներ իրականացնել Հայաստանում, այդ ծրագրերի մոտավորապես կեսը՝ սկսած հիմնանորոգման նախագծերից, նաև հետագա աշխատանքներով, անորակ էին: Այսինքն, այդ աշխատանքները մինչև հասավ ինչ-որ մի մակարդակի, որոշակի ժամանակ անցավ:

Կարծում եմ դա նույնպես բնական գործընթաց է, երբ որ պետական կամ համայնքային պատվերը լինում է շատ նվազ, այդ կարողություններն այդպես էլ առանձնակի չեն զարգանում: Այդ կարողությունները մնում են այնքան, ինչքան որ կա: Այդ ծավալը, եթե լինում է փոքր, այդ փոքր ծավալի պահանջարկը բավարարվում է ինչ-որ մի առաջարկով, բայց երբ այդ ծավալները կտրուկ մեծանում են՝ այդտեղ առաջանում են պոտենցիալ նաև որակական խնդիրներ: Նշեմ, որ ժամանակի ընթացքում այս խնդիրները լուծվեցին:

Այժմ նույնը մանկապարտեզների մասով է: Ես վստահորեն կհամաձայնեմ Ձեզ հետ, որ մենք հաստատ ունեցել ենք նախագծեր, որոնք ի սկզբանե լավը չեն եղել: Ունեցել ենք նախագծեր, որոնք 3 անգամ փոխել ենք, ունեցել ենք շինարարներ, որոնց հետ համաձայնության ենք եկել, որ նորմալ և տրամաբանական չէ նախագծերը և պետք է փոխվի: Ունեցել ենք նաև շատ լավ նախագծեր, և վատ շինարարներ, որոնց աշխատանքը չենք ընդունել:

Այստեղ ես ուզում եմ նորից անդրադառնալ ծավալների մասին, որովհետև, երբ խոսում ենք օրինակ՝ 7 ծրագրի մասին, այդ ամբողջ ծրագրերի ցանկը նայեք և տեսեք որքան են այդ ցանկում այդպիսի ծրագրերը և քանի տոկոսն է, որ խնդիր ունի: Մենք էլ ենք տեղյակ այդ խնդրից, այդ պատճառով դադար է եղել, բանակցություններ են լինում, բայց կան նաև տասնյակ ծրագրեր, որոնք հերթով իրականացնելով տարեցտարի որակը բարձրացնում ենք: Այդ ընկերության անունը, որ Դուք անընդհատ հնչեցնում եք, պարոն Մանուկյան, անկեղծ եմ ասում՝ ես միայն Ձեզնից եմ լսել:

Երևանի քաղաքապետարանում բոլոր գործընթացները տեղի են ունեցել մրցութային ընթացակարգով, այսինքն՝ նույնիսկ, եթե որևէ մասնակից ինչ-որ մեկի հետ փոխկապակցված է եղել, այդ մասնակիցը, ենթադրաբար, ամենացածր գինն է սահմանել տվյալ շինարարական աշխատանքն իրականացնելու համար:

Մեսրոպ Մանուկյան

-Երկրորդ հարցս վերաբերում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահագն Ալեքսանյանի կողմից ձայնագրությունում հնչեցված բովանդակությանը:

Պարոն Ավինյան, Վահագն Ալեքսանյանը մեղադրում է, որ 70-80% անորակ աշխատանքներ կատարողները «Ձեր սիրած նախկինների» հետ կապ ունեն: Ես ուզում եմ հասկանալ և հանձնարարեք, որպեսզի մոտակա 21 օրվա ընթացքում այդ 70-80% անորակ աշխատանքներ կատարողներին ներկայացնեն, մենք էլ տեսնենք, այդ նախկին իշխանության անդամներից ովքեր են, որ փոխկապակցված են Ձեր իշխանության հետ:

Տիգրան Ավինյան

-Պարոն Մանուկյան, ինձ թվում է, եթե հարցում իրականացնեք 2018 թվականից իրականացված բոլոր խոշոր ծրագրերի վերաբերյալ Դուք այդպիսի շատ հետաքրքիր սուբյեկտներ կհայտնաբերեք ինքներդ Ձեզ համար:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Ռոբերտ Ծովյան, խնդրեմ:

Ռոբերտ Ծովյան

-Պարոն Ավինյան, ուզում եմ հասկանալ ինչպե՞ս է տեղի ունենում, որ փողոցն ասֆալտապատվում է, մայթերը բարեկարգվում են ու դրանից հետո, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Երևան գազ» ընկերությունները կամ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը որոշում են, որ այդ հատվածներում աշխատանքներ իրականացնել: Վերջին օրինակը Հանրապետության փողոցն էր, որի համար շատ մեծ ցավ եմ ապրել:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-Ճանապարհների նորոգման ծրագիրը հաստատելուց առաջ նամակ է ուղարկվում բոլոր մատակարար կազմակերպություններին, որպեսզի մինչ նորոգումը սկսելն այդ տարածքներում իրականացնեն իրենց կողմից նախատեսված աշխատանքները: Վերջին երկու տարվա ընթացքում զուգահեռ իրականացվել է այս ծրագիրը: Որևէ դեպք չի եղել, բացառությամբ վթարների, որ միջին նորոգման ծրագիրը չհամաձայնեցվի մատակարար ընկերությունների հետ, կամ հակառակը:

Այնուամենայնիվ, հատկապես անցյալ տարի մեզ հաջողվեց բացառել նման դեպքերը: Սակայն առկա է երկու օբյեկտիվ հանգամանք՝ տեխնածին վթարներից խուսափել անհնար է: Կարող ենք այսօր իրականացնել կապիտալ ասֆալտապատման աշխատանքներ, սակայն վաղն այդ հատվածում վթարվի հին որևէ մալուխ կամ ջրագիծ: Օրենսդրորեն ոչ ոք լիազորված չէ անհետաձգելի այդ աշխատանքը թույլ չտալ: Դա սպառնում է մատակարարմանը, մարդկանց կենսաապահովմանը: Ձեր նշածը մեծամասամբ վերաբերում է վթարներին:

Երկրորդ հանգամանքը՝ այո, որոշ հատվածներում ունեցել ենք նման դեպքեր, որովհետև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը ներկայացրեց հավակնոտ և արդյունավետ ծրագիր՝ ընդհանուր մեկ համակարգի ստեղծում մայրաքաղաքի փոքր կենտրոնում, որտեղ կբացառվեն վթարները: Ծրագիրը քննարկվել և ստացել է համաձայնություն և որոշ փոքր հատվածներում համընկնում է եղել միջին նորոգված ճանապարհների հետ և բացառապես ամեն ինչ արել ենք լայնակի հատումներից զերծ մնալու համար:

Ինչ վերաբերում է Հանրապետության փողոցին, ապա տեղեկացնեմ, որ դա եղել է առանձին քննարկման առարկա, նախապես եղել է համաձայնեցված: Ամբողջությամբ չի քանդվել, այլ մի հատվածն է քանդվել, անձամբ եղել եմ այնտեղ նույն օրը, նայել Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի հետ: Սալահատակ որոշակի մայթ է քանդվել խաչմերուկի հատվածում, որովհետև այդ ծրագիրը շատ ծավալուն է՝ 131 կմ, որը բաժին է ընկնում 111 փողոցի: Դրանք պետք է քանդվեն, քանի որ դա ենթակայանից ենթակայան միացման ծրագիր է, իսկ նույն փողոցով կարող է հզորացման մալուխը մի քանի ենթակայան գնալ: Այնուամենայնիվ, ես ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ դա բացառիկ դեպք է, որ ժամանակագրական առումով չի համընկել նրանց ներդրումային ծրագիրը վարչական շրջանի ղեկավարի կողմից իրականացված ծրագրի հետ: Անզգուշությունը եղել է միայն այն, որ կարող էին անցնել ասֆալտապատ հատվածով, սակայն անցել են մայթով՝ հանելով սալը, եզրաքարը: Նույն օրը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը տվել է հայտարարություն, որ դա արվել է իր կողմից և ամբողջ սալահատակի վերականգնումն իրականացնելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունն՝ իր միջոցների հաշվին:

Տեղեկացնեմ նաև, որ ինձ մոտ եղել է քննարկում և գտել ենք այն շինարարին, ով ժամանակին իրականացրել էր Հանրապետության փողոցի սալահատակման, եզրաքարերի տեղադրման ծրագրերը՝ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի պատվերով: Շինարարը հրավիրվել է քաղաքապետարան և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը պարտավորվել է ֆինանսավորել այդ շինարարին և տարածքը վերականգնել նույնությամբ:

Այժմ ամենադժվար և ամենաարդյունավետ ծրագիրն է իրականացվում: Հավատացնում եմ Ձեզ, որ մի քանի ամսվա դժվարությունը 20-50 տարվա կենսաապահովման երաշխիք է ստեղծում Երևանի և երևանցիների համար:

Կա քաղաքապետի խստագույն հանձնարարականը, որ այլևս որևէ չհամաձայնեցված գործողություն չիրականացվի: Արդեն ունենք միջին նորոգման ծրագիրը, նախապես այդտեղ տեղադրվում են խողովակներ՝ հետագայում մալուխներ անցկացնելու համար: Մենք աստիճանաբար կգնանք այն ճանապարհով, որ սինխրոնիզացված այս աշխատանքները կիրականացվեն:

Հարգելի գործընկերներ, ևս մեկ անգամ ուզում եմ հիշեցնել, որ այս քայքայված ցանցի պայմաններում տեխնածին վթարներից՝ գազի, ջրի արտահոսքից անհնար է խուսափել:

Եթե կան խնդրահարույց կոնկրետ հասցեներ, պարոն Ծովյան, խնդրեմ, կարող ենք առանձին նայել, ես պատճառը կամ արդյունքը Ձեզ կասեմ:

Ռոբերտ Ծովյան

-Երկրորդ հարցը հնչեցնեմ. ուզում եմ արձանագրել՝ այն պայքարը, որ տարվում է կառուցապատողների դեմ, որպեսզի պատշաճ կերպով կահավորեն շինհրապարակները՝ չի ստացվում: Այդտեղ խնդիրը կարծում եմ տուգանքի չափն է՝ պետք է խստացնել: Նաև

ուզում են հասկանալ կա՞ այնպիսի նորմ, որ բացի փոշեկլանիչ սարքից, կառուցապատողը նաև պետք է շենքի չորս կողմում տեղադրի ցանց, որպեսզի ապահովի թե՛ հետիոտնի, թե՛ մեքենաների և թե՛ բանվորների անվտանգությունը: Օրինակ՝ Ադոնցի փողոցում, շենքի շինարարության ժամանակ, 10 օրվա ընթացքում, երկու հոգի ընկել են՝ մեկը մահացել է, մյուսը դարձել հաշմանդամ: Դրանից հետո շինարարը տեղադրեց ցանց: Հնարավո՞ր է դա ևս ներառել նորմի մեջ:

Տիգրան Ավինյան

-Տուգանքի չափի վերաբերյալ տեղեկացնեմ, որ, այո, այն փոքր է և ՀՀ Ազգային ժողովի գործընկերներին առաջարկել ենք փոփոխել այդ տուգանքի չափը:

Պարզաբանումներ կներկայացնի նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

-Շինարարության թույլտվություն ստանալու համար մշակվող նախագծի կազմում նաև մշակվում է և փորձաքննության է ենթարկվում շինարարական հրապարակի նախագիծը, որտեղ նման ցանց նախատեսվում է ըստ տեղանքի՝ և՛ շինության, և՛ կատարվող աշխատանքների առանձնահատկության: Տվյալ պահանջները սահմանված են Քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի հրամանով և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններից դուրս են:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը «Հանրային ձայն» խմբակցության անդամ Լուսինե Բուղայան:

Լուսինե Բուղայան

-Պարբերաբար բախվում եմ իրավիճակների, երբ պատմամշակութային վայրերը ճիշտ վերահսկողության տակ չեն գտնվում: Օրինակ՝ Նորքի կամուրջը (17-րդ դար) հայտնվել է մասնավորի տարածքում:

Ցանկանում եմ բարձրաձայնել «Կարմիր բլուր» հնավայրի ցանկապատման խնդրի մասին: Վարիչը պարբերաբար բարձրաձայնել է խնդրի մասին, բայց խնդիրը լուծում չի ստացել:

Ե՞րբ և ինչպե՞ս խնդիրը կարող է լուծում ստանալ:

Տիգրան Ավինյան

-Տիկին Բուղայան, պետք է նշեմ, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» նոր օրենքով սահմանվում են նոր կառուցակարգեր: Եթե պատմամշակութային հուշարձանը պատկանում է մասնավորին, ապա այդ պարագայում նույնպես Երևանի քաղաքապետարանն ունի պարտավորություն՝ պարտավորեցնելու սեփականատիրոջը պահպանելու հուշարձանն իր նախնական տեսքով և ձևով: Այսինքն՝ օրենքին համապատասխան, կունենանք գործիքակազմ և նմանատիպ դեպքերը վերահսկելու և այդ դեպքերի մասով տուգանքները բավականին մեծ են լինելու:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյան, խնդրեմ:

Մանուկ Սուքիասյան

-Մինչ բուն հարցը հնչեցնելը նախաբանով անդրադառնամ մանկապարտեզների հարցին, որը շատ արդիական է: Թե՛ այն մանկապարտեզների ցանկի, որ թվարկեց քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը և թե՛ այն, որ թվարկեց Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը, մենք ակնկալում ենք, որ Դուք՝ որպես գործող քաղաքապետ, գնալու եք դրանց հետևից և շատ արագ հանրությանը ներկայացնեք, թե ի՞նչ է կատարվել և ձեռնամուխ լինեք այդ ամենի վերադարձի գործընթացին:

Այժմ բուն հարցս հնչեցնեմ. ես նախօրեին եղել եմ Երևանի թիվ 17 հատուկ դպրոցում, որը հենաշարժողական և այլ խնդիրներ ունեցող երեխաների դպրոցն է: Այդ դպրոցը չի պատկանում քաղաքապետարանի ենթակայությանը, բայց այդտեղ սովորում են երևանցի երեխաներ: Այդ դպրոցն ունի տրանսպորտի լուրջ խնդիր՝ երեխաներն ի վիճակի չեն հանրային տրանսպորտից օգտվել:

Դպրոցն ունի երկու հնամաշ «Գազել» մակնիշի մեքենա՝ սայլակները բարձրացնող ամբարձիչներով կահավորված: Այդ մեքենաների վաղեմության ժամկետն անցել է և կարող են ճանապարհի կեսին փչանալ և երեխաները մնան կա՛մ անձրևի, կա՛մ ձյան, կա՛մ շոգի պայմաններում՝ փողոցում, մինչև ծնողների գալը: Իրենք դիմել են և՛ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, և ՀՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարություն, և՛ քաղաքապետարան: Այս երկրում չի գտնվում մի պետական հանձնառու մարմին, որը կլուծի այդ հարցը և հնամաշ ու պարբերաբար խափանվող երկու գազելը փոխարինվի ժամանակակից կահավորված ավտոբուսներով:

Հատկանշականն այն է, որ կա բարերար, ով պատրաստ է ֆինանսավորել, բայց ՀՀ կառավարության 2023 թվականի նիստում վարչապետն արգելել է պետական հիմնարկներին ընդունել որևիցե կարգի բարեգործություն:

Այդ երեխաների տրանսպորտային խնդիրը շատ հրատապ ու կարևոր է: Պարոն Ավինյան, Երևան քաղաքի, ինչպես Դուք եք ասում, սեփական եկամուտների այս շեշտակի աճի ֆոնին, այդ դպրոցում սովորող 106 երեխայի համար գոնե երկու համապատասխան կահավորված փոխադրամիջոցի հարցին, ես ակնկալում եմ, որ Դուք կտաք դրական ընթացք և այդ ամենը կկրի հրապարակային բնույթ:

Տիգրան Ավինյան

-Հարցը կուսումնասիրենք, կհասկանանք, այնուամենայնիվ, հարցն ում գործառույթների շրջանակում է, կփորձենք բանակցել մեր գործընկերների հետ, որպեսզի որոշակի լուծումներ տրվեն: Եթե լուծումներ չտրվեն, ապա կփորձենք այլընտրանքային տարբերակներ:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմենակ Դանիելյան, խնդրեմ:

Արմենակ Դանիելյան

-Առաջին հարցս վերաբերում է տրանսպորտին: Եթե տրանսպորտը բարեփոխել եք, ապա վարորդների համար վարվելակերպի, մարդկանց հետ փոխհարաբերության, տրանսպորտը վարելու և կանգառ կատարելու վերաբերյալ որոշակի դասընթացներ կազմակերպու՞մ եք, թե՞ ոչ: Քանի որ հանրային տրանսպորտի սխալ կանգառ կատարելու կամ երկրորդ գծում կայանելու պատճառով կարող են առաջանալ խցանումներ:

Ս.թ. ապրիլի 17-ին, ժամը 18.40-ին թիվ 7 համարի «ZHONG TONG» մակնիշի 5453 պետհամարանիշի ավտոբուսի վարորդը քաղաքացուն, արցախցի լինելու պատճառով, իջեցրել է ավտոբուսից՝ կնոջ հասցեին բարձրաձայն ատելության խոսք ասելով: Պատճառը եղել է այն, որ կինը վարորդին նկատողություն է արել ավտոբուսն արագ վարելու համար:

Արդյոք այս դեպքի հետ կապված վարորդը պատժվել է, թե ոչ, կամ ի՞նչ գործողություն է նախատեսվում իրականացնել: Այս արարքը խիստ դատապարտելի է և պետք է գնահատական ստանա:

Տիգրան Ավինյան

-Պարոն Դանիելյան, միանշանակ համաձայն եմ Ձեր կողմից տրված գնահատականների հետ: Մասնավորապես, որևէ խտրական վերաբերմունք ՀՀ քաղաքացու նկատմամբ որևէ աշխատակից իրավունք չունի թույլ տալ և առհասարակ յուրանքանչյուր անձի նկատմամբ նման խտրական վերաբերմունքն անթույլատրելի է:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Պարոն Դանիելյան, տեղեկացնեմ, որ երեկ կայացած գործակարգավարական խորհրդակցության ժամանակ «Երևանի ավտոբուս» ՓԲ ընկերության կողմից զեկուցվել է, Ձեր կողմից նշված մեխանիզմների առկայության և ներդրման մասին: Մասնավորապես, Երևանի քաղաքապետի կողմից տրվել է հանձնարարական, որ վարորդներին աշխատանքի ընդունելու տրամաբանությունը պետք է փոխվի: Այսինքն՝ այն վարորդները, ովքեր ունեն D կարգ, բայց աշխատանքի ընդունման պահին երևում է, որ դեռ պրակտիկ աշխատանքային հմտություններ չունեն, պետք է իրականացնենք տեսական և պրակտիկ ուսուցում: Դա վերաբերում է ոչ միայն նոր աշխատանքի ընդունվող վարորդներին, այլև արդեն իսկ աշխատող վարորդներին: Ուստի՝ Ձեր կողմից տրված հարցի պատասխանը կլինի միանշանակ՝ այո, այդ գործընթացը տեղի է ունենում:

Իմ կողմից մոնիտորինգ է վարվում թեժ գծով և «Ակտիվ քաղաքացի» հավելվածով: Կոնկրետ վարորդների վարվելակերպի հետ կապված բողոքների քանակի մասով կա նվազում, սակայն չի բացառվում, որ առանձին դեպքեր կարող են լինել:

Ինչ վերաբերում է վերահսկողական մեխանիզմներին, պետք է ասեմ, որ ավտոբուսների մեծ մասում առկա է տեսաձայնագրման հնարավորություն՝ ուղիղ

միացմամբ: Մենք տեսախցիկների միջոցներով կուսումնասիրենք Ձեր կողմից նշված՝ ս.թ. ապրիլի 17-ին տեղի ունեցած միջադեպը, կհետաքննենք և եթե խտրական խոսք է հնչել, ապա պատասխանատվության համապատասխան միջոց կկիրառվի:

Ավտոբուսների երկրորդ գծում կայանելու վերաբերյալ ցանկանում եմ իմանալ, հարցը վերաբերում է այն դեպքի՞ն, որ կանգառն ազատ է և ավտոբուսը կայանել է երկրորդ գծում, թե՞ կանգառում կայանված է եղել այլ ավտոբուս, իսկ մյուս ավտոբուսը կայանել է երկրորդ գծում:

Հաճախ կանգառում կայանում են մարդատար տաքսի կամ մասնավոր ավտոմեքենաներ, որի վերաբերյալ ահազանգում ենք ՀՀ ՆԳՆ գործընկերներին՝ այդ ավտոմեքենաները տարհանելու համար: Նրանք ևս իրենց ռեսուրսների շրջանակներում մեզ աջակցում են: Թույլ տվեք ենթադրել, որ կանգառում եղել է որոշակի խոչընդոտ և վարորդը ստիպված է եղել երկրորդ գծում կայանել:

Արմենակ Դանիելյան.

-Երկրորդ հարցը հնչեցնեմ. 2024 թվականին 26.5 մլրդ ՀՀ դրամ գույքահարկ է հավաքագրվել, իսկ 2025թ.-ին նախատեսվել է հավաքագրել 33.5 մլրդ ՀՀ դրամ գույքահարկ:

Միայն փոխադրամիջոցների մասով 2024 թվականին հավաքագրվել է 13.5 մլրդ ՀՀ դրամ գույքահարկ և 2025 թվականին նախատեսվել է հավաքագրել մոտավորապես 14 մլրդ ՀՀ դրամ: Երևանի քաղաքացիները կամ վարորդները գույքահարկը վճարում են, որ Երևան քաղաքի փողոցներում փոսերի պատճառով իրենց մեքենաները չվնասեն և անվտանգ երթևեկեն: Երևան քաղաքի փողոցներում շատ են փոսերը: Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում և թաղամասերում առկա են ոչ միայն փոսեր, այլև քանդված է ամբողջ փողոցը: Նման դեպքեր առկա են Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթի փողոցի սեփական սեկտորում, Սիլիկյան և Հաղթանակ թաղամասերում:

2024 թվականին 82.5 մլն ՀՀ դրամ ծախսվել է հետիոտնային անցումների համար, իսկ 2025 թվականի համար նախատեսվել է՝ 80.0 մլն ՀՀ դրամ:

Կոմիտասի պողոտայում՝ շուկայի հարակից հետիոտնային անցումի տարածքում տեղադրել եք վերելակ, որը չի գործում: Նույն դեպքն առկա է Նոր Նորք վարչական շրջանում:

Պետք է նշեմ նաև, որ Սուրբ Սարգիս եկեղեցու հարակից գետնանցումն ունի շտապ վերանորոգման կարիք: Առաջարկում եմ այդտեղ կառուցել ավտոկայանատեղի:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը:

Արմեն Փամբուխչյան

-Երևանի քաղաքապետարանը մայրաքաղաքի բոլոր գետնանցումների համար մշակում է ծրագիր, թե ինչ սկզբունքով և ձևաչափով կարելի է տալ մասնավորին:

Մասնավորը կիրականացնի որոշակի բարեկարգման աշխատանքներ և կունենա իր հետաքրքրությունը:

Ցանկանում եմ ասել, որ քննարկվել է նաև Ձեր կողմից նշված առաջարկը:

Առաջիկայում կունենանք այն կոնցեպտը, որը կդրվի մրցույթի և հույս ունենանք, որ 2026 թվականին կլինեն մրցույթի հաղթողներ: Արդյունքում՝ մայրաքաղաքի գետնանցումները կբերվեն պատշաճ տեսքի:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Աշոտ Սարգսյան, խնդրեմ:

Աշոտ Սարգսյան

-2023 թվականին սկսվեց շատ լուրջ և կարևոր գործընթաց՝ Երևան քաղաքի գովազդային մեծ վահանակների ապամոնտաժումը: Իհարկե, դեռ վերջնականացված չի դա, բայց այն ժամանակ եղավ հանդիպում գովազգների տեղադրման գործունեություն իրականացնող անձանց հետ: Այն ժամանակ, եթե ես չեմ սխալվում, պայմանավորվածություն էր եղել, որ հանվում են բոլոր մեծ վահանակները, հետո քննարկում է արվում և բոլորին տրամադրվում է սիթի-ֆորմատի, փոքր վահանակներ տեղադրելու թույլտվություն:

Հարցս հետևյալն է՝ ապամոնտաժվեց մոտավոր գովազդային 400-500 վահանակ և ապամոնտաժված բոլոր վահանակաների որևիցե մեկի սեփականատեր 2024-2025թթ. չի տեղադրել որևիցե նոր վահանակ: Ինձ հետաքրքիր է այդ մարդիկ ուղղակի որոշել են այլևս չզբաղվե՞լ այդ բիզնեսով, թե այլ խնդիր կա, որ չեն կարողանում մասնակցել:

Քանի որ այժմ տեսանելի է դառնում, որ քաղաքում դրվում են նոր տեսակի գովազդներ, կուզեի հարցնել՝ արդյոք հնարավոր է կազմակերպել ևս մեկ հանդիպում, ինչպես դա եղավ 2023 թվականին՝ տեղեկատվություն ներկայացնելու, որպեսզի բոլորի համար պայմանները հավասար լինեն:

Երկրորդ հարցը հնչեցնեմ. վերջերս առիթ ունեցա ՀՀ Ազգային ժողովում խնդրանքով, կոչով դիմել ՀՀ ոստիկանապետին, որ թեքահարթակների հարակից տարածքներում մեքենաներ կայանող վարորդների նկատմամբ ձեռնարկվեն միջոցառումներ, բայց տեսանելի արդյունքներ չկան: Քաղաքապետի հանձնարարությամբ Երևանում շատ մեծ քանակի թեքահարթակներ են կառուցվել, հատկապես վերջին շրջանում, ու ցավոք սրտի այդ թեքահարթակները մարդիկ չեն կարողանում օգտագործել, որովհետև մեքենաները կայանում ու փակում են: Վարչական շրջանների ղեկավարները որոշակի աշխատանքներ տանում են այդ ուղղությամբ՝ տեղադրում են արգելակներ, բայց եթե շարունակենք այդ ձևաչափով, քաղաքը կվերածվի բարիկադների:

Ես ևս մեկ անգամ ուզում եմ ոստիկանության ուշադրությունը հրավիրել այդ գործընթացին, որ մարդիկ ստիպված չլինեն մանկասայլակով դուրս գալ փողոց և շրջանցել

այդ հատվածը: Առավելագույն ուշադրություն պետք է դարձնել այս հարցին, որովհետև այն ուղիղ կապ ունի քաղաքացիների անվտանգության հետ:

Տիգրան Ավինյան

-Նշված հարցի վերաբերյալ առաջին հերթին Ձեր խոսքը պետք է ուղղեք երևանցիներին, ովքեր իրենց ավտոմեքենաները կայանում են այն հատվածներում, որտեղով պետք է անցնեն մարդիկ՝ մանկասայլակներով, անվասայլակներով:

Սիրելի երևանցիներ, ովքեր կայանում են իրենց մեքենաներն այդ անցումների մոտ, հիշեք, որ այն մարդիկ ովքեր ձեր մեքենաների պատճառներով չեն կարողանում անցնել, շատ վատ մտքեր են ունենում ձեր մասին:

Պարեկային ծառայության ռեսուրսները սուղ են և որպեսզի այս խնդիրը լուծվի, մենք առաջարկել ենք նաև օրենսդրական փոփոխություններ, որպեսզի կարողանանք հենց կոնկրետ քարշակի ծառայությունը արտապատվիրակել այլ ընկերությունների, որոնք կոնկրետ դեպքը կարձանագրեն և ավտոմեքենան կտանեն:

Ինչ վերաբերում է գովազդներին, ապա տեղեկացնեմ, որ պայմանավորվածությունը եղել է հետևյալի մասին՝ բոլոր այն ընկերությունները, որոնք համագործակցելով Երևանի քաղաքապետարանի հետ, ընդունելով նոր պայմանները կհեռացնեն իրենց կողմից տեղադրված մեծ վահանակները քաղաքի տարածքից, որոշ չափով, առաջնային կարգով կստանան հնարավորություն Երևան քաղաքում ունենալու որոշակի այլ գովազդային վահանակներ, որոնք այնքան էլ ընդունելի չեն, բայց որպես փոխհամաձայնություն առաջարկել ենք նմանատիպ տարբերակ: Եղել են ընկերություններ, որոնք համաձայնվել են և եղել են ընկերություններ, որոնք չեն համաձայնվել և անդադար պայքարել են, բողոքել, հաղորդում են ներկայացրել հանցագործության մասին և այդպես շարունակ:

Պարոն Սարգսյան, ես կարծում եմ, որ շատ արդար է՝ այն ընկերությունները, որ համաձայնել և իրենց կամքով փուլ առ փուլ սկսել են հեռացնել վահանակները, նրանք ոչ մեծ ծավալի, բայց այնուամենայնիվ գովազդային տարածք ստանում են, իսկ այն ընկերությունները, որոնք ամեն ինչ անում են, որպեսզի իրենց հին վահանակները չհեռացնեն՝ գովազդային տարածք չեն ստանում:

Պարզաբանումներ կներկայացնի նաև քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Հանցագործության վերաբերյալ հաղորդման դեպքի մասին եմ ուզում տեղեկացնել, որպեսզի մարդիկ տեղեկանան, թե ինչի մասին է խոսքը: «Հանցագործությունը» կայանում էր նրանում, որ մենք համարձակվել էինք համայնքային տարածքում ինքնակամ տեղադրված գովազդն ապամոնտաժել:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սուսաննա Մելիքյան, խնդրեմ:

Սուսաննա Մելիքյան

-Առաջին հարցս վերաբերում է համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների աջակցություն ծրագրին, որի ուղղությամբ փաստացի ծախը 2023-2024թթ. կազմել է 1.800.000.000 ՀՀ դրամ, այս տարվա համար նախատեսված է ևս 291.000.000 ՀՀ դրամ: Հուսով եմ, որ այն նախատեսվում է կրթական, մշակութային խնդիրների լուծմանը:

Արդյոք ընդգրկվել են, կամ նախատեսվում է ընդգրկել հայրենաճանաչողությամբ, ազգային, մշակութային ժառանգության պահպանմամբ, զարգացմամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին և հայրենակցական միություններին, արդյոք այդ կազմակերպություններն ընդգրկված են այս ցանկում, եթե ոչ՝ ընդհանրապես ի՞նչ սկզբունքով են ընդունվում այս կազմակերպությունները:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը:

Քրիստինե Ավետիսյան

-Նշված բյուջետային հոդվածը նախատեսված է ընդհանուր մշակութային, առողջապահական, սպորտային բոլոր հասարակական կազմակերպություններին՝ համայնքային և ոչ համայքային կազմակերպություններին աջակցելու համար: Տվյալ պահի դրությամբ, եթե ինչ-որ հասարակական կազմակերպություն կամ համայնքային կամ ոչ համայնքային կազմակերպություն դիմում է, որ աջակցեն ինչ-որ նոր ծրագրի կայացմանը կամ միջոցառմանը՝ քննարկվում է համապատասխան ոլորտը համակարգող վարչության պետի և քաղաքապետի տեղակալների հետ, որի հիման վրա՝ կարգադրությամբ, նշված գումարը տրամադրվում է:

Տիգրան Ավինյան

-Տիկին Մելիքյան, եթե կցանկանաք Ձեզ կփոխանցենք նախորդ և այս տարվա ցանկը, թե ում է հատկացվել գումար:

Սուսաննա Մելիքյան

-Երկրորդ հարցս բնակիչների քաղպաշտպանության հարցի վերաբերյալ է: Անդրադառնալով քաղպաշտպանության ուղղությամբ ծախսված գումարներին ցանկանում եմ նշել, որ 2023-2024թթ. ծախսվել է ընդհամենը 181.000.000 ՀՀ դրամ և ևս 87.000.000 ՀՀ դրամ այս տարի, այսինքն՝ երկուսի գումարը միասին մոտավորապես կազմում է 260.000.000 ՀՀ դրամ է: Արդյոք չեք կարծում, որ առողջապահական լուրջ մարտահրավերներ ունեցող Հայաստանի Հանրապետությունում և Երևանի այսպես խիտ բնակեցված հատվածում այս գումարները շատ չնչին են, հատկապես, երբ բնակչության պատսպարման խնդիր առաջանա՝ մենք առնչվելու ենք բնակելի շենքերի նկուղների անմխիթար վիճակի հետ:

Այս մասով ցանկանում եմ նշել շենքերում վերջերս փակցված հացաթերթիկ-ցուցանակի մասին, որտեղ նշված է, որ արտակարգ իրավիճակների ժամանակ պետք է իջնել շենքի նկուղները, բայց այդ նկուղները գտնվում են սարսափելի վիճակում: Ցանկանում եմ իմանալ՝ այստեղ որևէ գույքագրում կա՞, թե ո՞ր շենքերում որքա՞ն նկուղներ կան, կամ ինչու՞ գումարներ չեն հատկացվում այս խնդրի լուծման ուղղությամբ:

Տիգրան Ավինյան

-Տիկին Մելիքյան, նմանատիպ գույքագրում դեռևս իրականացվել է 2022 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացում: Այդ ժամանակ գույքագրվել են ոչ միայն բոլոր հնարավոր պատսպարանները, նկուղային հատվածները, որտեղ Երևանի քաղաքապետարանը վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի միջոցով հնարավորություն է ունեցել, այլև համատիրությունների աջակցությամբ, մաքրվել են, բերվել պատշաճ տեսքի:

Ցանկանում եմ նշել, որ միայն այս հոդվածով չէ, որ իրականացվել են աշխատանքներ, օրինակ՝ վարչական շրջանների ղեկավարները 2022 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, իրենց հրատապ ծրագրերով, մեծ ծավալի աշխատանքներ են իրականացրել և այդ գույքագրումն ունենք:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը:

Արմեն Փամբուխչյան

-Այս մասով ես ուզում եմ մի քանի շեշտադրում անել, որ բնակելի շենքերի նկուղների մաքրման աշխատանքները համատիրության գործառույթ է՝ ըստ առաջնահերթության, բայց վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը կամ Երևանի քաղաքապետարանը մշտապես պատրաստ են աջակցելու համատիրություններին նկուղային տարածքների մաքրման աշխատանքների իրականացման հարցում: Ցանկանում եմ նշել նաև, որ նկուղների տարածքները կեղտոտում են ոչ թե վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը կամ Երևանի քաղաքապետարանը, այլ տվյալ շենքի բնակիչները և սա մեր լրջագույն խնդիրներից մեկն է, որ մարդը կամ փակում է, կամ ուղղակի աղտոտում է և անհնարին է դարձնում իր առաջնային թաքստոցի վայրը:

Երևանի քաղաքապետարանն այս մասով նաև աշխատում է ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության հետ և պարբերաբար քաղաքապետարանի համապատասխան վարչությունն այս մասով զեկույցներ է ներկայացնում և Ձեր նշած խնդիրը գտնվում է մեր ուշադրության կենտրոնում:

Սուսաննա Մելիքյան

-Ես նկուղների մաքրության մասին չէի խոսում: Հարցս նկուղների հիմքերի ամրացման, ճաքած պատերի վերանորոգման մասին է: Սա պետք է լինի ռազմավարական և ոչ թե համատիրության լուծման խնդիր: Ես չգիտեմ ինչպես են ֆինանսավորվում այս

հարցերը: Այս հարցը պետք է կապակցվի նաև շենքերի ամրացման խնդրի հետ: Այստեղ նորոգման և հիմնանորգման հարցի մասին է, ոչ թե աղբի մաքրման աշխատանքների:

Տիգրան Ավինյան

-Տիկին Մելիքյան, երբ խոսում ենք այդ նկուղային տարածքների մաքրությունից, խոսքը վերաբերում է այն տարածքներին, որտեղ նույնիսկ մուտք հնարավոր չէր գործել, այսինքն՝ նկուղային տարածքները քաղաքաշտպանության կարիքների առկայության պայմաններում, իրենց հիմնական նպատակին չէին կարողանալու ծառայել: Ձեր մյուս հարցը, որը վերաբերում է քաղաքաշտպանության մեկ այլ կոմպոնենտի, այսինքն՝ շենքերի վթարայնության աստիճանին, դրա լուծումներն այլ ձևերով են քննարկվում: Մասնավորապես, հիմնական թիրախն Աջափնյակ վարչական շրջանում գտնվող շենքերն են, որոնք ունեն 3-րդ, 2-րդ ռիսկայնության խնդիրներ, իսկ 4-րդ ռիսկայնության շենքերի խնդիրների հետ կապված հարցերն այլ ձևաչափով են լուծվում: Նշեմ, որ 2-րդ և 3-րդ ռիսկայնության ունեցող շենքերի խնդիրները լուծելու նպատակով Քաղաքաշինության կոմիտեի և ՀՀ կառավարության գործընկերների հետ մշակում ենք մեխանիզմ, որպեսզի կարողանանք ներդրումային հետաքրքիր միջավայր ստեղծել՝ այդ շենքերը վերակառուցելու համար:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյան, խնդրեմ:

Արամ Թորոսյան

-Առաջին հարցը ներկայացնեմ. հինգ-վեց ամիս առաջ հանդիպել եմ Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Հակոբ Բալայանի հետ և քննարկել ենք, թե ինչ ընթացքում է Աղի լճի վերականգման նախագիծը և Սարի թաղի մայթի կառուցման աշխատանքները: Երեխաների համար այդ վայրով անցնելը վտանգավոր է, քանի որ անցնում են փողոցով և հանդիպակաց մեքենաներ են գնում: Ինչպես նաև Սարի թաղի բնակիչները բարձրաձայնում են, որ Գումի շուկայի դիմաց գոյություն ունի մի հատված, որը փաստացի իրենց կանգառն է, բայց տվյալ վայրում կանգառասրահ տեղադրված չէ:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Հակոբ Բալայանը:

Հակոբ Բալայան

-Տեղեկացնեմ, որ Սարի թաղի մայթի կառուցման էսքիզային նախագիծը պատրաստ է, ուղարկվել է քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչություն՝ կարծիքի, իսկ քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից Աղի լճի նախագիծը գտնվում է ավարտական փուլում:

Արամ Թորոսյան

-Երկրորդ հարցը հնչեցնեմ. վերջին 2-3 օրը «Skyline» նախագիծն ակտիվ գովազդում է Օրբելի եղբայրների փողոցի վրա կառուցվող 35 հարկանի 5 շենքերի և մնացած կառույցների մասին և նկատեցի, որ մի քաղաքացի գովազդի տակ գրեց, որ

շինթույլտվություն չունեն, ինչպես են վաճառում: Պատասխանեցին, որ շինթույլտվությունը մոտ օրերս կլինի:

Հարցս հետևյալն է, պարոն Ավինյանին, արդյոք ռազմական հոսպիտալի նախկին տարածքում այդ նախագծի շինթույլտվությունը մոտ օրերս կլինի՞ և ի՞նչ ընթացքում է առհասարակ:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Շավարշ Գրիգորյանը:

Շավարշ Գրիգորյան

-Մենք ունենք դիմում տվյալ կառուցապատողից, համալիր փորձաքննությունն անցել են, դիմել են մեզ անցյալ շաբաթվա վերջում: Լրամշակման անհրաժեշտություն է առաջացել, կլրամշակեն փաստաթղթերը և կներկայացվի Ձեզ:

Տիգրան Ավինյան

-Պարոն Թորոսյան, իմ վերաբերմունքն ընդհանուր առմամբ հետևյալն է. եթե քաղաքաշինական խորհուրդը բացասական վերաբերմունք չունի որևէ քաղաքաշինական նախագծի վերաբերյալ, Երևանի քաղաքապետարանն այդտեղից ունի հավաքագրվող էական եկամուտներ:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյան, խնդրեմ:

Արմեն Գալջյան

-Հարցս վերաբերում է տրանսպորտի ոլորտին: Վերջին ժամանակաշրջանում ունենում ենք ավտոբուսների վթարների բազմաթիվ դեպքեր: Դա պայմանավորված է լինում այն հանգամանքով նաև, որ հիմնականում ավտոբուսները չունեն իրենց առանձնացված գծերը: Այն տեղերում, որտեղ կան, հաճախ ավտոբուսներն են դուրս գալիս այդ գծերից, որպեսզի ավելի արագ տեղ հասնեն, կամ այլ մեքենաներ են մուտք գործում և անընդհատ վթարներ ու տուժածներ են լինում և համայնքային գույքն է վնասվում:

Կցանկանայի իմանալ՝ ի՞նչ քայլեր են ձեռնարկվում այս ուղղությամբ, որովհետև արդեն տարին կիսվել է, բայց այս տարի ընդամենը մեկ առանձնացված նոր գիծ ունենք: Կարծում եմ դանդաղ են ընթանում տեմպերը և նաև ուզում եմ տեղեկատվություն ստանալ «կարմիր գծերի» վերաբերյալ՝ ի՞նչ թարմացումներ կան, ինչպես նաև մաքրված հատվածների և կանգառն արգելող վայրերի վերաբերյալ:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը:

Վազգեն Հարությունյան

-Ավտոբուսների առանձնացված գծերի վերաբերյալ տեղեկացնեմ, որ ս.թ. մայիսի 17-ին Մոսկովյան փողոցում մի հատված արդեն իսկ կահավորվել է՝ Աբովյան և

Նալբանդյան փողոցների հատվածում, որտեղ ավտոբուսը Խանջյան փողոցից դեպի Մոսկովյան փողոցի ուղղությամբ կարող է փողոցը հատել և հասնել Աբովյան փողոց: Հունիս ամսվա ընթացքում նախատեսվում է իրականացնել ավտոբուսների առանձնացված գծերի ընդլայնման մեծ ծրագիր, որն անդրադառնալու է Մաշտոցի պողոտայից գծի շարունակությանը դեպ Իսակովի պողոտա: Հունիս ամսվա ընթացքում ակնկալվում են նաև երթևեկությունների կազմակերպման մի շարք փոփոխություններ:

«Կարմիր գծերի» վերաբերյալ տեղեկացնեմ, որ այս տարի ծածկույթն ընդլայնվել է մի շարք հատվածներում, մասնավորապես՝ Հին Երևանցու փողոցում արդեն իսկ իրականացվում է հսկողություն: Սա այն խնդրահարույց կետերից էր, որ մատնանշվեց: Ընդլայնումը շարունակվում է, ներկայումս աշխատանքներ են իրականացվում Խորենացու փողոցում՝ կախված 28 փողոցի լուսավորության ցանցի վերազինման հետ: Դրա ավարտից հետո, նոր փողոցների մասին հավելյալ կտեղեկացնենք:

Ինչ վերաբերում է կանգառն արգելված մի շարք վայրերին, ապա, այո, այդպիսի խնդիր կա Երևան քաղաքում, երբ կանգառը և կայանումն արգելվում է, խնդիրն առաջանում է՝ հսկողության թույլ լինելու պատճառով, բայց ակտիվ համագործակցում ենք ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության հետ՝ այդ խնդիրը կարգավորելու նպատակով:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմեն Քոչարյան, խնդրեմ:

Արմեն Քոչարյան

-Հարցս Երևանի կենդանաբանական այգու վերաբերյալ է: Պարոն Ավինյան, Երևանի կենդանաբանական այգում կա լուրջ խնդիր, նախ՝ այնտեղ ունենք դեղորայքի խնդիր, որի հետևանքով ամիսներ առաջ կենդանի է անկել և դա եղել է շարունակաբար, որի պատճառը մենք չենք իմացել: Նշեմ, որ այս հարցը հետագայում քննարկել ենք քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ տիկին Հայկազյանի հետ և ասում էին, որ այդ կենդանին ակնել է դեղը ներարկելուց մի քանի ժամ հետո: Այս մասով ես ուզում եմ նշել, որ ես երկու տարի է ավագանու անդամ եմ և Երևանի կենդանաբանական այգու կառավարման խորհրդի անդամ և այս հարցն անընդհատ բարձրաձայնվել է, որ ունենք դեղորայքի խնդիր, որը կենդանիների վրա լավ ազդեցություն չի թողնում:

Հարցս հետևյալն է. պարոն Ավինյան, ինչպես մյուս ՀՈԱԿ-ներն, այնպես էլ Երևանի կենդանաբանական այգու հողատարածքը, կցված չէ ՀՈԱԿ-ին և այնտեղ տարբեր շենք-շինություններ համապատասխան գրանցում չունեն: Այս պատճառով չեն կարողանում լիցենզիա ձեռք բերել, որպեսզի այդ դեղորայքն ունենանք: Այս մասով՝ թե՛ դեղորայքի պահպանման, թե՛ այլ խնդիրներ կան:

Պետք է նշեմ, որ 2025 թվականի բյուջեով նախատեսված՝ 200.000000 ՀՀ դրամ գումար է տրամադրվել փղի ազատավանդակի կառուցման համար և, եթե պետք է այդ

գումարները հատկացվի և դեղը չունենանք, որի հետևանքով տարբեր կենդանիների անկումներ գրանցի, ի՞նչն է մեզ խանգարում, որ այդ ՀՈԱԿ-ի հողատարածքը, մնացած ՀՈԱԿ-ների նման, կցվի ՀՈԱԿ-ին և այդ շենք-շինություններին հասցե տրվի և այդ հարցը լուծենք:

Կարծում եմ այս հարցը բոլորիս պետք է մտահոգի, որովհետև կենդանաբանական այգին բոլորինս է և այնտեղ պետք է ունենանք առողջ և լավ կենդանիներ:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը:

Սիրարփի Հայկազյան

-Երևանի կենդանաբանական այգին ունի անասնաբուժական հատված, որտեղ օգտագործում են մի շարք դեղամիջոցներ, որոնց մի մասը թմրեցնող՝ քնեցման համար օգտագործվող դեղամիջոցներն են: Առհասարակ բժշկության մեջ դրանք մի քանի խմբի են բաժանվում և օգտագործվում է այն խումբը, որի համար լիցենզիա պարտադիր չէ, որովհետև, այո, լիցենզիայի ձեռք բերման համար խնդիր եղել է: Այս մասով, սակայն, պետք է նշեմ, որ տարիներ շարունակ կենդանաբանական այգին օգտագործել է այդ դեղամիջոցները և դրանք եղել են նորմալ: Այո, իրենց մեջ, ինչպես ցանկացած թմրեցնող դեղորայք, պարունակում է ռիսկեր, որոշ կենդանատեսակների համար ավելի կիրառելի են, որոշների համար ռիսկայնությունը փոքր-ինչ ավելի մեծ է:

Անկումը, որը կենդանու մի վանդակից մյուսը տեղափոխման ժամանակ է տեղի ունեցել, ինչպես հետո պարզվել և արձանագրվել է բժշկական հերձման արդյունքում, եղել է սթրեսի պատճառով: Առհասարակ վայրի կենդանիները սթրեսային կենդանիներ են և ցանկացած իրավիճակից իրենց մոտ կարող է առաջանալ սթրես: Այս մասով առկա են բոլոր տեսաձայնագրությունները և վկայություններն այն մասին, որ կենդանին թմրեցումից արթնանալուց հետո 5 ժամ արթուն է եղել, այսինքն՝ անկումը թմրեցման պատճառով չի եղել:

Ինչ վերաբերում է այդ դեղորայքները ձեռք բերելուն՝ մենք այժմ աշխատում ենք ՀՀ առողջապահության նախարության հետ և փորձում ենք հասկանալ, թե որոնք են լիցենզիա ստանալու համար խնդիրները: Այո, խնդիրներից մեկն այն է, որ Երևանի կենդանաբանական այգին և հետևապես շինությունները պատկանում է Երևան համայնքին, իսկ պետք է կցված լինի կենդանաբանական այգուն, որպեսզի ունենան հատուկ պահպանվող տարածք և այլն: Սրա հետ զուգահեռ, պետք է նշեմ նաև, որ Հայաստանի Հանրապետությունում կա այլ խնդիր, որ այն թմրեցնող դեղամիջոցների խումբը, որը ցանկալի է ձեռք բերել՝ շատ սահմանափակ է կամ գրեթե հնարավոր չէ ձեռք բերել:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սամվել Հակոբյան, խնդրեմ:

Սամվել Հակոբյան

- Առաջին հարցը վերաբերում է մանկապարտեզներին, այսօր արդի թեմա է: Այնպիսի տպավորություն է, որ Հայաստանում, Ազգային ժողովում իշխանություն գոյություն չունի, այլ գոյություն ունի երկու՝ տարբեր ժամանակաշրջանների ընդդիմություն՝ մերօրյա ընդդիմություն, որը մենք ենք և Դուք՝ տարբեր թվականների ընդդիմություն: Մենք Ձեզ տեղեկացնում ենք, որ կոռուպցիա ենք հայտնաբերել, ավագանու անդամը, ակտիվիստը գնում են, տեսնում, բացահայտում, նկարում են՝ Դուք ընդունում եք, որ այդտեղ խնդիր կա, դրանից հետո լինում է հայհոյանք, ծեծ, խայտառակ իրավիճակներ:

Անցյալ ամիս կայացած ավագանու նիստի ժամանակ մենք առաջարկեցինք զեկուցվող դարձնել մեկ այլ նախագիծ, որը կրկին վերաբերվում էր նույն «Լիլիան Արմ» ընկերությանը:

Դուք խոսում եք 2002-2004թթ. գողացված, վաճառված մանկապարտեզների մասին, հարցս հետևյալն է՝ յոթ տարի է իշխանություն եք զբաղեցնում, ինչու՞ Դուք չեք դատում ու հետ վերադարձնում այն ամենը, ինչ խոստացել էիք անել: Վստահեցնում եմ՝ այդ դեպքում Ձեր վարկանիշն ավելի բարձր կլիներ: Ո՞րն է տրամաբանությունը, եթե Դուք գիտեք, որ գոյություն ունի մի կազմակերպություն, որ վատ աշխատանք է կատարել, ինչպես եք թույլ տալիս, որ կրկին, ավագանու նիստով, նույն կազմակերպության վերաբերյալ հարցը որպես չզեկուցվող անցնի: Արդյոք ցանկացած տրամաբանություն ունեցող մարդ չպետք է մտածի, որ այստեղ կա կոռուպցիա:

Տիգրան Ավինյան

-Երբ տեղեկացնում եք, որ ինչ-որ մի տեղ կա կոռուպցիա, դրանք տարբեր են: Ես տեղեկացրել եմ, թե ինչ տեսակի խնդիրներ են արձանագրվել: Դրանք եղել են խնդիրներ՝ որակի հետ կապված, փաստաթղթերի հետ կապված: Որոշ դեպքերում աշխատանքները կանգնել են մինչև կոնկրետ լուծումներ գտնելը, որովհետև շատ դեպքերում նույն շինարարը հիմնավորումներ, բացատրություն ունի, թե ինչու է այդպես եղել: Տարբեր մրցույթների մասնակցում են տարբեր ընկերություններ: Մրցույթին չմասնակցելու պայմանը միայն սև ցուցակում հայտնվելն է: ՀՀ օրենսդրությամբ հստակ պահանջներ են սահմանված, թե որ դեպքերում է որևէ մի ընկերություն՝ իր փոխկապակցված անձանցով, հայտնվում սև ցուցակում: Ձեր բարձրաձայնած խնդիրների դեպքում, օրենսդրության պահանջներով, սև ցուցակում չեն ներառվում: Խնդիրները բազմաշերտ են ու կարող եմ հստակ արձանագրել, որ ոչ միայն շինարարի մեղավորությունն է: Ամեն մի դեպքում տարբեր է:

Ինչ վերաբերում է մանկապարտեզների տարածքները վերադարձնելուն, ապա Երևանի քաղաքապետարանի անունից ասում եմ. այն ինչ Երևանի քաղաքապետարանը պետք է վերադարձնի, քանդի, ես Ձեզ վստահեցնում եմ, որ վերջին 3 տարվա ընթացքում

մեծ տեմպերով դա արվում է և դա ի ցույց է դրվում ի լուր աշխարհի, ինչպես դա արվել է տարբեր այգիներում, բակերում, ավտոտնակների ու կրպակների հետ՝ մաքրել ենք, գեղեցկացրել ենք, ստեղծել ենք կանաչ տարածքներ, խաղահրապարակներ, ֆուտբոլի դաշտեր և այլն: Մեր պարտականությունները մենք կատարում ենք և վերջին 3 տարվա ընթացքում դա ապացուցել ենք և որևէ խտրական վերաբերմունք չկա:

Սամվել Հակոբյան

-Երկրորդ հարցը հնչեցնեմ. Ինձ են դիմել Ավան վաչական շրջանի Հովհաննիսյան թաղամասի հ.26/2 հասցեի բնակիչները: Շենքի դիմաց կոյուղագծի խնդիր է առաջացել ձմռանը, որին կարճաժամկետ տեղային լուծում են տվել: Ապրիլ ամսին կրկին խնդիր է առաջացել, երկու շաբաթ բնակիչները զանգել են թե՛ «Վեոլիա ջուր» ընկերություն, թե՛ թաղապետարան, որպեսզի որևէ լուծում տրվի, քանի որ կեղտը դուրս էր լցվում: Մարդիկ եկել են փոսը քանդել, այդպես քանդած թողել: Դեպքից 10 օր հետո բնակիչները կրկին զանգահարել են՝ ճշտելու լուծում տրվելու է, թե այդպես քանդված մնալու է: Տեղեկացրել են, որ կգան: Դրանից հետո եկել են վարձու աշխատողներ՝ Հնդկաստանի քաղաքացիներ, 2 օր կարճ աշխատել են ու որևէ ռեալ արդյունք չի եղել:

Եղանակները տաքացել են և վիճակն ավելի տհաճ է դարձել: Այդ աշխատանքերը կատարելիս վնասել են նաև շենքի վերելակի մալուխը և Հովհաննիսյան թաղամասի հ.26/2 շենքի վերելակը չի աշխատել 35 օր: Իմ կարծիքով սա խայտառակություն է և ոչ կոմպետենտ աշխատանք: Ես ուզում եմ իմանալ ո՞վ է եղել դրա պատասխանատուն, ի՞նչ պատժամիջոցներ են կիրառվել: 35 օր հետո վերելակը վերանորոգել են, իսկ փոսը կիսով չափ փակել: Արդյոք սա այդքան դժվար խնդիր և աշխատանք է, որ ավելի օպերատիվ ու արդյունավետ լուծում սպասել չէր կարելի:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Ավան վարչական շրջանի ղեկավար Վահե Հակոբյանը:

Վահե Հակոբյան

-Նախ տեղեկացնեմ, որ Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը գիշեր-ցերեկ աշխատում է, որ որպեսզի Ավանի բնակիչների կյանքը դարձնի ավելի անվտանգ ու բարեկեցիկ:

Խնդիրը եղել է կոյուղու վթար, որը մոտ 30 տարվա խնդիր է: «Վեոլիա ջուր» ընկերության հետ համատեղ փորձել ենք լուծումներ գտնել, որպեսզի նոր ջրագիծ կառուցվի և վերջապես գտել ենք: Այդ տարածքում տրվել է ժամանակավոր լուծում, 2026թ. կպատվիրվի նախագիծ՝ ընդհանուր գիծը փոխելու համար:

Աշխատանքները կատարելիս պատահաբար վնասվել է վերելակի մալուխը: Դա այն շենքն է, որի վերելակը փոխարինվել է, մուտքը, տանիքը վերանորոգվել են քաղաքապետարանի կողմից: Այդ փոսը մինչև այժմ փակված չէ, որովհետև ջրերը չեն ցամաքել, որպեսզի հնարավոր լինի փոսալցումն իրականացնել և ասֆալտապատել:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Աննա Ավետիսյան, խնդրեմ:

Աննա Ավետիսյան

-Ցանկանում եմ կրկին անդրադառնալ «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը նվիրված երգերին: Այս մասով երկու անգամ հարցում եմ ուղարկել և երկու անգամն էլ ստացել եմ տարբեր պատասխաններ՝ և՛ թվային առումով, և՛ երգերի կատարողների առումով: Անհասկանալի է, ինչպե՞ս է ստացվում, որ նույն խնդրի վերաբերյալ երկու հարցման մեջ նշված են երկու տարբեր թվեր և երկու տարբեր կատարողների անուններ:

Հարցս հետևյալն է. ցանկանում եմ իմանալ վերջապես, երբ հնչեցին 2024 թվականի «Էրեբունի-Երևան» տոնակատարության երգերը, ո՞վ լսեց և եթե հնչել են ինչ-որ մի տեղ, կխնդրեի ինձ տրամադրել հղումը:

Նշեմ, որ վերջին հարցման մեջ, որտեղ ինձ տեղեկացրեցին, որ Քրիստ Մանարյանի «Իմ հիասքանչ Երևան» երգը, որ արժեցել է 20.000.000 ՀՀ դրամ հնչելու է 2025 թվականին: Պատճառն առհասարակ անհասկանալի է, ինչու՞ 2024 թվականի «Էրեբունի-Երևան» տոնակատարության երգերն այդպիսի լայն շրջանառության մեջ չեղան և չլսեցինք:

Ցանկանում եմ իմանալ որտե՞ղ են վատնվել այդ փողերը և որտե՞ղ են երգերը:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը:

Գոշ Սարգսյան

-«Էրեբունի-Երևան» տոնակատարության երգերը, ինչպես նշեցիք, նվիրված էր Երևան քաղաքին, ոչ թե «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը: 2024 թվականին՝ Երևանի քաղաքապետարանի պատվերով «Կոմբինատ փրոդաքշն» ՍՊ ընկերությունը ներկայացրել էր ծրագիր՝ Ձեր կողմից նշված երգերի և տեսահոլովակի հետ կապված, որը մի շարք քննարկումներից հետո որոշվեց կյանքի կոչել: Նշեմ, որ և՛ երգերը, և՛ տեսահոլովակը ոչ թե չի հրապարակվում այն պատճառով, որ գաղտնի է պահվում, այլ քննարկումների արդյունքում որոշվել է, որ 2025 թվականին «Էրեբունի-Երևան» տոնակատարության շրջանակներում հատկացվելու է առանձին բեմ, որը կկոչվի «Ռետրո Երևան» և այդտեղ կհնչեն այդ երգերը և կլինի նաև տեսահոլովակի պրեմիերան:

Աննա Ավետիսյան

-Երկրորդ հարցս վերաբերում է կրկին մանկապարտեզներին: Պարոն Ավինյան, Ձեր հանձնարարականները կարծես թե չեն կատարվում, խոսքը Նորք-Մարաշ վարչական շրջանի թիվ 121 մանկապարտեզի շենքի մի հատվածի մասին է, որի մասին գրեթե մեկ տարի առաջ բարձրաձայնել էի: Այնտեղ, եթե չեմ սխալվում, պայմանագրի հարց կար: Արդեն մոտ 4-5 տարի է մանկապարտեզի այդ հատվածը չի գործում և պայմանագրի ժամկետն էլ գրեթե արդեն ավարտելու շրջանում է կամ միգուցե արդեն ավարտվել է: Մինչ

օրս այդ հատվածը չեն տրամադրել մանկապարտեզին և այստեղ հերթագրված է 64 երեխա: Ո՞րն է պատճառը, որ մանկապարտեզի այդ հատվածը նորոգված է և չի գործում:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Լևոն Հովհաննիսյան

-Տիկին Ավետիսյան, երբ այս հարցի մասին բարձրաձայնել էիք, տվյալ ժամանակահատվածից սկսած զբաղվել ենք այս հարցով, այս մասով մի քանի քննարկումներ ենք արել, համապատասխան գրություններ ենք գրել և սպասում ենք արձագանքի: Այս հարցի շուրջ Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի և քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի հետ միասին աշխատանքներ ենք իրականացվում: Մեկ տարբերակ կար, որ մանկապարտեզի դահլիճը ձևափոխեն դարձնեն հավելյալ խումբ, բայց այդ տարբերակը դեռ չենք ուզում իրականացնել, որովհետև դա նշանակում է մնացած երեխաները կզրկվեն դահլիճ ունենալու հնարավորությունից և մանկապարտեզում չեն կարողանա տարբեր միջոցառումներ իրականացնել:

Տիկին Ավետիսյան, կրկին ցանկանում եմ տեղեկացնել, որ այն պահից, երբ այս հարցի մասին նշել եք՝ նույն պահից համապատասխան գրություններն ուղարկվել են և՛ վարձակալներին, և՛ տարածքը տիրապետողին և սպասում ենք պատասխանի: Լինելու ենք հետևողական և կարծում եմ սեպտեմբերից երեխաները կգնան մանկապարտեզ:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Արաքսի Դիլանյան, խնդրեմ:

Արաքսի Դիլանյան

-Ավագանու անցյալ տարվա վերջին նիստի ժամանակ ես հարց ուղղեցի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանին՝ պոլիկլինիկաների վերամիավորման վերաբերյալ: Այդ գործընթացն ավարտվել է, բայց միայն թղթային ձևակերպումները: Շենքերով չեն միավորվել: Ես ուզում եմ հասկանալ՝ միավորման մեկնաբանություններից մեկն այն էր, որ դա արվում է ի օգուտ բուժառուների: Այսինքն՝ բուժառուն մտնի մի շենք և բոլոր հետազոտություններն արվի մի տեղում: Պոլիկլինիկաներն ինչպես կային, այդպես էլ մնացել են և կան պոլիկլինիկաներ, որոնք ընդհանրապես չեն էլ միավորվելու շենքային տարբերակով:

Հարցս հետևյալն էր. գրեթե երեք տարի է այս գործընթացը տևում է, Դուք ինչ-որ հետազոտություն ունե՞ք, մոնիտորինգ արե՞լ եք, թե բուժառուներն ի՞նչ են շահել այդ վերամիավորումից: Սակայն ես պատասխան չստացա: Այս տարվա սկզբին պարոն Մադաթյանն ինձ ասաց, որ ինձ կտրամադրվի 7 էջանոց պատասխան: Համբերատար սպասում եմ այդ պատասխանին, բայց այն չկա:

Ուզում եմ հասկանալ կա՞ հետազոտություն, արվե՞լ է մոնիտորինգ, թե ոչ և այդ պատասխանը ե՞րբ է լինելու:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանը:

Սարգիս Մադաթյան

-Տիկին Դիլանյան, դեռ 2024 թվականին Դուք այս հարցը բարձրացրել եք և ես հանձնարարել էի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչությանը, որպեսզի հաշվետվություն ներկայացնեն: Նախորդ նիստին ես այդ հաշվետվությունը պատրաստել էի, սակայն Դուք նիստից շուտ դուրս եկաք և հաշվետվությունը մնաց ինձ մոտ: Այժմ ես կրկին հանձնարարել եմ առողջապահության վարչությանը, որպեսզի ներկայացնեն հաշվետվությունը և ես տրամադրեմ Ձեզ:

Տիգրան Ավինյան

-Բոլոր պոլիկլինիկաներում վերջին 2-3 տարվա ընթացքում ֆինանսական մուտքերը, ֆինանսական հոսքերն էականորեն, կտրականապես աճել են:

Մանրամասն տեղեկատվություն կներկայացնի նաև քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետի տեղակալ Անահիտ Չարխիֆալաքյանը:

Անահիտ Չարխիֆալաքյան

-Պոլիկլինիկաների միավորման գործընթացը մենք նախաձեռնեցինք, որովհետև կային մի քանի պոլիկլինիկաներ, որտեղ բնակչության թիվը 10.000-11.000 էր, իսկ այդ դեպքում հնարավոր չէր լինում ծախսերի արդյունավետությունը ճիշտ կազմակերպել: Բացի այդ, բնակչության փոքր թվաքանակի դեպքում առաջանում էր նեղ մասնագետների ժամային գրաֆիկի խնդիր՝ այն շատ կարճ էր և նրանք չէին կարողանում ամբողջ օրը սպասարկել քաղաքացիներին: Դրա համար, հաշվի առնելով վարչատարածքային բաժանումները, որոշ պոլիկլինիկաներ միավորվեցին և բնականաբար, ծախսերի արդյունավետությունն ավելի գրագետ և ճիշտ է: Այդ ճանապարհով հնարավորություն առաջացավ արդեն որոշակի և՛ վճարովի ծառայություններ ավելացնել, և՛ այլ ֆինանսական միջոցներ ներառել, որի արդյունքում հնարավոր է եղել որոշ սարքավորումներ ձեռք բերել, նաև քաղաքապետարանի կողմից է օգնություն տրվում և պոլիկլինիկաներն իրենք կարողանում են կազմակերպել իրենց զարգացումը և առաջընթացը:

Նորք-Մարաշի առողջության կենտրոնը միավորվել է 4 պոլիկլինիկայի, նաև միացվել է Լեոյի մասնաճյուղը: Հաշվի առնելով քաղաքացիների հարմարավետությունը շատ պոլիկլինիկաներ շարունակում են գործունեությունն իրականացնել իրենց տեղերում: Քննարկումներ ենք ունեցել քաղաքացիների հետ և խոստացել, որ պոլիկլինիկաները տեղանքից չեն տեղափոխվելու, մնալու են և բժշկական օգնություն և սպասարկում մատուցելու են տեղում:

Նորք-Մարաշի պոլիկլինիկայում ամբողջությամբ իրականացվում է լաբորատոր, գործիքային հետազոտություններ, սոնոգրաֆիա և նաև մատուցվում է նեղ մասնագետների ծառայություն: Այն նեղ մասնագետների ծառայությունը, որը տեղում հնարավոր չի լինում կազմակերպել՝ բժիշկների արձակուրդում գտնվելու պատճառով, քաղաքացիներն ուղեգրվում են թիվ 4 պոլիկլինիկա:

Չկա որևէ առողջության կենտրոն, որտեղ ծառայություններն ամբողջ ծավալով չեն մատուցվում: Եթե որևէ խնդիր է առաջանում, պայմանագիր է կնքվում այլ բժշկական կենտրոնների հետ և քաղաքացիներին ցուցաբերվում է ամբողջ ծավալով բժշկական օգնություն և սպասարկում:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Սեդա Տեր-Մինասյան, խնդրեմ:

Սեդա Տեր-Մինասյան

-Ես ունեմ երկու հարց, որոնք ունեն երկու տարվա վաղեմություն: Առաջին հարցը վերաբերում է հուշատախտակներն անվանական ծառերի փոխարինելու ծրագրին: Ի՞նչ է արվել այս ուղղությամբ:

Տիգրան Ավինյան

-Ես ողջունում եմ Ձեր առաջարկը, տիկին Տեր-Մինասյան, և ես կարծում եմ, որ մենք այս ուղղությամբ պետք է առաջ ընթանանք:

Պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանը:

Սարգիս Մադաթյան

-Մոտ երկու ամիս առաջ շրջայց ենք կատարել Կոմիտասի այգում, այնտեղ տեղադիրքի առումով հարմար կլինի իրականացնել այս ծրագիրը, պարզապես այդ հատվածում իրականացվում են ճանապարհաշինական աշխատանքներ: Այժմ այս հարցը քննարկում ենք նաև Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանի հետ և 10-օրյա ժամկետում կունենանք առարկայական ծրագիր:

Տիգրան Ավինյան

-Պարոն Մադաթյան, հունիսի 2-ի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ կներկայացնեք տեղեկատվություն այս հարցի վերաբերյալ:

Սեդա Տեր-Մինասյան

-Երկրորդ հարցը հնչեցնեմ. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու անդամներից մեկը դեռ երկու տարի առաջ գրառում էր արել սոցիալական ցանցում, որ Երևանի փողոցները կունենան միանման, նույնատիպ ցուցանակներ: Այս հարցը մնաց օդում, մինչև օրս էլ չունենք լուծում:

Տիգրան Ավինյան

-Տիկին Տեր-Մինասյան, խնդրում եմ ուշադրություն դարձրեք էկրաններին, և հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Մոտեցումը երկուսն էր, առաջինը, քանի որ նմանությունը պետք է ապահովվեր և բավականին վաղուց Երևան քաղաքում տեղադրվում են թուջե և բավականին լավ որակի ցուցանակներ: Եվ մենք որոշել ենք, կոնկրետ Կենտրոն վարչական շրջանում շարունակել տեղադրել այս ցուցանակները, որոնք բավականին թանկ են, որպեսզի արդեն տեղադրվածները ստիպված չհանենք՝ միանմանությունն ապահովելու համար:

Մյուս վարչական շրջաններում՝ Էրեբունու փողոցում դեռ անցյալ տարի տեղադրել ենք HPL նյութից ցուցանակներ և սպասում էինք ձմեռն անցնի, որպեսզի հասկանանք եղանակային պայմաններից ելնելով որևէ խնդիր առաջանում է, թե ոչ: Խնդիր չենք ունեցել և ըստ էության շարունակելու ենք մյուս վարչական շրջաններում այս տիպի ցուցանակների տեղադրման աշխատանքները: Մի փոքր դիզայնի փոփոխություն են կատարել՝ գույնի և որոշակի դեկորատիվ էլեմենտի առումով, որը կապված է Երևան քաղաքի բրենդ բուքի լոգիկայի հետ և ըստ էության մյուս վարչական շրջաններում շարունակելու ենք այս ձևով: Քանակական տվյալներ կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետ Արմեն Առաքելյանը:

Արմեն Առաքելյան

-2025 թվականի ընթացքում պլանավորվել է տեղադրել թուջե ձուլվածքով, 100 հատ, 5 թև ուղեցույց ցուցանակ, ևս 100 շենքի համարների և փողոցների անվանումների թուջե ցուցանակներ՝ Կենտրոն վարչական շրջանում, իսկ HPL նյութից ցուցանակների անհրաժեշտ քանակը շատ է, երբ նմուշը ստանանք և առարկայական դիտարկենք, կքննարկենք քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության հետ հնարավոր քանակի տեղադրման հարցը:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Հայկ Միրզոյան, խնդրեմ:

Հայկ Միրզոյան

-Այսօր մանկապարտեզների մասին շատ խոսեցինք և իմ հարցը կրկին այդ թեմայի վերաբերյալ է: Ցանկանում եմ իմանալ հնարավորություն ունե՞նք իրականացնելու կարիքների գնահատում, թե այդ օտարված մանկապարտեզների մոտ տարածքներում կամ վարչական շրջաններում քանի՞ երեխա է իր հերթին սպասում, որ կարող է մեկ-երկու տարի սպասի: Նշվեց նաև, որ երբեմն հնարավոր է մինչև դպրոց գնալը սպասի, հասկանանք այն քաղաքական կուրսը, որն իրականացվել է նախկինում, ի՞նչ հետևանքներ է ունենում մեր երեխաների համար:

Սրան զուգահեռ խոսվեց նաև աշխատանքի ծավալի մասին, որն իրականացնում ենք, թե նոր բարեկարգված մանկապարտեզները քանի՞ շահառու ունեն: Ես կարծում եմ, որ այս 2 թիվն իրար համեմատությամբ հստակ քաղաքական օբեկտիվ գնահատական կտա մեզ:

Տիգրան Ավինյան

-Պարոն Միրզոյան, եթե քաղաքական գնահատականի մասին էր՝ ես հնչեցրեցի երկու թիվ, թե 2000-ականներին օտարվել էր 45 մանկապարտեզ և վերջին ժամանակաշրջանում հիմնանորոգվել է 49 մանկապարտեզ:

Այս մասով ցանկանում եմ նաև նշել, որ բոլոր հիմնանորոգվող մանկապարտեզներում ավելի մեծ քանակով երեխա ենք կարողանում ընդունել, որովհետև դեպքերի մի զգալի զանգվածում խմբերի քանակն ավելանում է:

Հարցի շուրջ պարզաբանումներ կներկայացնի նաև քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանը**:**

Մարգարիտ Խաչատրյան

-Այո, պարոն քաղաքապետ, հիմնանորոգված մանկապարտեզները միջինում 1,5 խմբով ավել են վերաբացվում: Լինում են դեպքեր, երբ նույն հզորությամբ են վերաբացվում, մեկ դեպք ենք ունեցել, երբ, օրինակ՝ ստանդարտների բերելով մի խմբով պակասել են, բայց հիմնականում միջինում 1,5 խմբով ավել հզորությամբ են վերաբացվում:

Ինչ վերաբերում է հերթերին՝ այո, հերթեր կան, մոտ 14.000 երեխայի հերթ ունենք, բայց 10.000 երեխա վստահաբար կհաճախեն մանկապարտեզներ: Նշեմ, որ մեր մոտեցումը՝ տարեց-տարի մսուրային խմբեր ավելացնելու մասով, ապահովվում ենք: Քանի որ վերջին ամսվա ընթացքում ձևավորել ենք խմբեր՝ նոր տարածքներ վերանորոգելով, վերջին թիվը չեմ կարող ասել, բայց վստահաբար մսուրային խմբերի տարբերությունը 8-ից ավել է՝ նախորդ տարվա համեմատ:

Ինչ վերաբերում է օտարված մանկապարտեզներին և այս պահին այդ տարածքներում հերթագրման ցուցանիշներին, ապա տեղեկացնեմ, որ այս պահին բանավոր կամ նույնիսկ համակարգից հնարավոր չի դուրս բերել: Դրանք կպատրաստեմ և կներկայացնեմ:

Ցանկանում եմ նաև նշել, որ մանկապարտեզներում հերթագրված են 2023 թվականին ծնված երեխաները, իսկ 2019 թվականին և 2020 թվականին հերթագրված երեխաներ չկան: Այսինքն՝ գոնե մեկ տարի վստահաբար բոլորն ունեն հնարավորություն մանկապարտեզ հաճախելու և տարեց-տարի փորձում ենք շեմն իջեցնել և արդեն միջին խմբի երեխաների ընդգրկվածությունը ևս շատ մեծ է: Հաճախելու են վստահաբար 10.000-ը, որովհետև այս տարի մանկապարտեզն ավարտելու են 10.000 երեխա:

Հայկ Միրզոյան

-Երկրորդ հարցս վերաբերում է նորից այն իրականացվող քաղաքականությանը, որի արդյունքում բակային շատ տարածքներում տեղի է ունեցել հողազավթումներ, որոնք հետագայում վերածվել են ցանկապատված աղբանոցների կամ լքված կրպակների, մետաղի ջարդոնների: Գիտեմ նաև, որ բակերի բացազատման, կրպակների

ապամոնտաժման հետ կապված գործընթաց է իրականացվում, հատկապես այն կրպակների, որոնք լքված են: Սա շատ ակնհայտ խնդիր է և ուզում եմ հասկանալ ի՞նչ աշխատանքներ է իրականացվել, գույքագրում իրականացվե՞լ է, թե ոչ:

Տիգրան Ավինյան

-Պարոն Միրզոյան, կնշե՞ք կոնկրետ ի՞նչ գույքագրման մասին է խոսքը:

Հայկ Միրզոյան

-Օրինակ՝ կրպակների գույքագրման:

Տիգրան Ավինյան

-Մեր նոր համակարգերում՝ GIS քարտեզի վրա, տարատեսակ շերտեր և արդեն իսկ գույքագրված օբյեկտներ ունենք: Դրանցից են, օրինակ՝ ամբողջ քաղաքում գույքագրված առևտրի օբյեկտները: Նշեմ, որ այժմ բոլոր տեսակի ինքնակամ շինությունների ամրագրման գործընթաց է սկսվել: Այս մասով Կադաստրի կոմիտեից ստացել ենք նաև ահռելի ծավալի ինֆորմացիա, որով մի քանի քարտեզներ իրար հետ համադրելով, օրինակ՝ երկու-երեք խնդրով, պոտենցիալ այդ շենքերը կարողանում ենք դուրս բերել: Դեռևս ամբողջական, ինքնակամ կառույցների մասով, քարտեզի շերտը չունենք, բայց այս պահի դրությամբ առաջին հերթին աշխատում ենք այդ ուղղությամբ:

Նշեմ նաև, որ ունենք շատ տարբեր շերտեր, որ վերաբերում են աղբահանությանը, այստեղ ունենք ոչ միայն աղբամանների տեղադիրքերն, ունենք նաև աղբատարների տեղաշարժը և ըստ իրենց տեղաշարժի և իրենց մեխանիզմների աշխատանքի մենք կարող ենք հասկանալ արդյոք այդ աղբատարը տվյալ աղբամանից աղբը հավաքեց, թե ոչ: Այսինքն՝ արդեն այս աստիճանի գործիքներ ունենք:

Ինչ վերաբերում է բուն կրպակներին և մնացյալ շինություններին, որոնց գոյությունն օրենքի տեսանկյունից ոչ միանշանակ է՝ դրանց մասով վերջնական գույքագրումը ու քարտեզը ստեղծում ենք:

Ավարտվեց հարց ու պատասխանը:

Ավագանու հարգելի՛ անդամներ, հարգելի՛ գործընկերներ, Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 4-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմող՝
Կազմակերպական վարչություն